

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՐԱԾ ՆԱԻ ՍԸ

Երկու տարիէն աւելի է որ եւրոպայական Հայերու պատկարզ մը անողորմելի թշնամին կը հանդիսանայ անոնց որ ազգային պատուութեան շարժումը վարեցին ու կը վարեն: Մեղադրանքներու քննութեանը չենք մտնել. պահ մըն ալ ընդունինք թէ իրենց բոլոր պարտականքները արդարացի ըլլան. բայց հարցում մը. — Դ՞ուք ի՞նչ ըրիք արգելելու համար այդ շարիքները:

Ազգային դատին յաղթանակը ժողովրդային շարժումէ ակնկալողները աշխատեցան: Իրաւ է որ անոնց մէջ ալ սպրդեցան խաբեբաններ, շահախնդիրներ, յիմարներ, բայց միթէ պահպանողականներուն կարգերը ազնուութեան եւ իմաստութեան տիպարներ միայն կը պարփակեն: Յեղափոխականները գործողներ եղան. աշխատութիւն, զոհուիլութիւն, անձնուիրութիւն, ահա ի՞նչ կը ներկայացնեն իրենց ամբողջութեանը մէջ: Կոտեցան զէնքը ձեռքերնին, ուղղութիւն տուին ժողովրդին պաշտպաններուն, բանտերը մտան, տանջանքներու ենթարկուեցան, կախաղանը եղան:

— Յիմարութիւն այդ ամէնը, բաղադրանքներ, պաշտպանութիւն, որուն հետեւանքները կը ծանրանան ազգին վրայ:

Աս է վաճառականին պատասխանը:

Այս օրուան քննադատները շատոնց է Եւրոպա կը բնակին. հաւանօրէն գաղափար մը կազմած են կուսակցական պարտականութեան վրայ: Գաղափարակիցներու հաւաքական մարմին մը կը կուսի հակառակորդ գաղափարակիցներու հաւաքական մարմին մը դէմ, երկուքն ալ սպառազինուած այն զէնքերով զոր օրէնքը եւ բարոյականը կը թոյլատրեն: Այսպէս ահա պահպանողական կազմակերպութեան դէմ կը կանգնի ազատականը, երկուքն ալ ունենալով իրենց թերթերը, ատենաբանները, պարագլուխները, գործողները: Անտարբերները զրկուած են կուսակցութեան մը տարած յաղթանակին հետեւանք եւ զոյ ազդեանքներուն վրայ բերան բանալու իրաւունքէն: Թող ձեռնպահ չմտային: Հիմա կուսական քննադատներն ալ եթէ համոզուած կին յեղափոխական շարժումին աղիտաբեր հետեւանքներուն, ոճրագործներն են եթէ ամբարտակ չկանգնեցան կանխատեսեալ վտանգին դէմ: Թերթի դէմ թերթ չհանել, քարոզի դէմ՝ քարոզիչ, գործողի դէմ՝ գործող. սա չէ՞ր իրենց հեռատես ազգասէր Հայու պարտա-

կանութիւնը: Ու այդ կոխը մղելու համար կուսանն ա ինչքան իրենց նպատաւոր: Դրամատէր, առանց ո՛ր եւ նեղութեան քանի մը ժամուան մէջ հազարաւոր սփիւններ կրնային պատրաստ ունենալ. պահպանողական, իրենց թերթերն ու քարոզիչները անարգել պիտի սփռուէին հայ աշխարհին ամէն կողմը, ազատ անցադրով: Ըրին բա մը: Կանխագուշակել աղէտ մը, զայն արգելելու միջոցները ունենալ, եւ սակայն ձեռնպահ մնալ, շատ աւելի մեղեանագործութիւն է քան թէ գիտակից կամ անպիտակից շարագործի մը ոճիրը:

Բայց փութանք արդարացումին: Ո՛չ, այդ բարի վաճառականները ոճրագործներ չեն, վասն զի ո՛ր եւ շարիք գուշակած չըլլալով՝ զայն արգելելու պարտականութեան մէջ ալ չէին գտնուել: Իրենց կարգերէն թուան էն ուժգին ծափերը Յուլիս 15ին, Փոքր-Հայրի արշաւանքներուն, Արշակունիի եւ Մազաւաի գնտակահարութեան, Սեպտեմբեր 18ին: Մէկ յանցանք մը ունին միայն. իմաստուն-քաղաքագէտ հայրենասէրներ կ'ուզեն հոշակուիլ, առանց սակայն ո՛ր եւ պղտիկ գոհողութեան կամ մտաւոր յուսութեան: Եղան անոնցմէ որ պիտու խորհրդաւոր տատանումներով յայտարարեցին թէ կոտորածներուն մէջ իրենց մասն ալ կար: «Մենք ըրածնիս գիտենք, վերջէն կը տեսնէք:» Հա՞րկ է ըսել թէ երկուեալ պատուորներու ատենան մը անպարտութեան վճիռ պիտի արձակէր այս ինքնամբաստան ոճրագործներուն, հակառակ փառասրբանին յամառ պնդումներուն՝ հաստատելու թէ այդ վաճառականները մէյմէկ պղտիկ Լուպանֆներ եղած են սուլթանին համար:

Երբ քաղաքականութիւնը ընդ միջեց մեր դատին դէպի յաջողութիւն յառաջացումը, այժմու «սրտցաւ» վաճառականները ան ատեն միայն Յեղափոխութիւնը պատապարտելու հրան: Այդ «մետասաներորդ մամուլ» բողոքարկուները հաւատացեալ գործողներ չեն, ուստի ձախտրուութեան ատեն շուտ կ'ընկճին. մտքերնին վարանոտ է, հետեւաբար սրոշ գաղափարներ չեն կրնար ունենալ. օրը օրին կը խանդավառին կամ կը վհատին. ազգին աղէկութիւնը կ'ուզեն, բայց չեն գիտեր թէ բարիքը ո՛ւր կից կը ծնի, շարիքը ո՛ւր կից. ազգին ծառայութիւն մատուցանելու փափաք կը տածեն, բայց դեռ չեն վճռած թէ ի՞նչ պէտք է ընեն: Առ այժմ քննադատութեամբ կը ծառայեն հանրութեան: Ու ոչ ոք թող տարակուսի թէ բարեկարգութիւններու հարցը երբ Եւրոպայի օրակարգին առաջին

ինդիրը ըլլայ, ինչ որ թերեւ շատ չուշանար, այդ միւսնոյն արեւածաղիկները նորէն խորհրդաւոր գեմքով, աչքերնին կէս-ձգտուն, պիտի մթմթան:

— Տեսա՞ք մենք ինչե՛ր ընել տալինք:

* * *

Համբաւաւոր վաճառական մը որ ժողովրդականութիւն կը վայելէ, հերոս Բարիզ զգածեալ շեշտով մը ըսած է.

— Յեղափոխական շարժումին հետեւանքները ծանր եղան, բայց շարժումին ծնունդ տուողները մենք ենք. ուրիշները աւելի առաջ տարին ինչ որ մենք սկսանք. օգնելով Ներսէս պատրիարքին, հայկական խնդիրը յարուցինք Սան-Սթէֆանօ եւ Պերլին. ազգը բոլորովին արթնցաւ. եթէ յանցաւորները փնտռենք, մենք ալ յեղափոխականներուն չափ պատասխանատու ենք:

Այդ վաճառականը շատ իրաւունք ունի երբ արդի կացութեան համար պահպանողականներուն մեծկակ բաժին մը կը հանէ, — յայտնի է թէ «արդի կացութիւն» բացատրութիւնը լոկ պահպանողականներու ըմբռնումին համեմատ նկատողութեան առնելով: Յեղափոխութեան գաղափարը մէկէն ի մէկ ժողովրդի մը խելապատակէն զուրս չի ցատքեր, ինչպէս Խմաստութեան աստուածուհին Արամազդի ուղեղէն: Ժամանակին հոլովութիւններուն ծնունդն է ան. 1893ին յառաջաբանը 1890ին մէջ է, որ ինքն ալ 1870ին անմիջական հետեւանք եղող 1878էն բլխած է: Հիմակ իրենց կեանքը 40-50 ով հաշուողները իրենց հողին ու մաքին կրած փոփոխութիւններուն պատուութեանը մէջ կրնան ուսումնասիրել հայ ազգին գաղափարներուն եւ զգացումներուն բնաշրջումին հանգրուանները:

Եթէ ազգին աղէտներուն պատճառը վերագրուի սուլթանին եւ թիւրքերուն ընդդէմ հայոց խորին ատելութեանը, ընդունելու ենք թէ ազգային զօրեղ ատելութիւններն ալ մէկ քսնի ամսուան մէջ չեն ծնիր ու զօրանար. ատելութիւնն ալ իր գազաթնակէտին հասնելու համար պէտք ունի ժամանակին աշակցութեանը: Թիւրք ցեղը հայ ազգին վրայ լիովին գործադրեց աշխարհակալողի բռնապետութիւնը. սակայն հինգ դար վերջը երբ Հայաստանի բնիկ ցեղը ուժաթափ եւ ընկճուած կը կարծէր, թիւրքին հետ դրեթէ ի մի ձուլուած, յանկարծ խաբուած ըլլալը զգաց: Հինգ դարէ ի վեր հայ ժողովուրդը երեսը կը կրէր դիմակ մը, ինչ որ ազգերու փոխադարձ յարաբերութեան մէջ Քաղաքականութիւն կը կոչուի: Այդ դիմակին տակ քիչ շատ կ'ապրէինք իրարու հետ, բայց օր մը այդ դիմակը վար առնուեցաւ, ու թիւրքը զգաց թէ Հայը, որուն գլուխը իր կրունկին տակ ճզմուած կը կարծէր, աւելի ուժեղ է քան թէ տիրապետութեան առաջին ժամանակները: Ալ հիմակ հարուածը աւելի ուժգին պիտի տար: Գիմակը ամբողջապէս վար առնուեցաւ Սան-Սթէֆանօ եւ Պերլին: Արդ սուլթանը եւ թիւրքիոյ իսլամները ոչ թէ հայ յեղափոխութեան թշնամիներն են այլ այն նպատակին որուն կը ձգտի նաեւ յեղափոխութիւնն ալ, այսինքն հայ հայրենիքի ազատութիւնը: Ո՛չ յեղափոխականները իրենք եւ

զան միայնակ այդ նպատակը ստեղծողները, եւ ո՛չ ալ իւրենք են առաջ գայն բողաճերի պարզեցին թշնամիին աչքերուն առջեւ: Հայոց պատրիարքարանն էր որ Պերլին ինքնավարութիւն պահանջեց Հայաստանի համար, Րիզէն ալ նաւահանգիտա ունենալով: Չյաջողեցանք, բայց մեծ բան մը երեւան եկաւ: Թաքուն մտքի այս մերկացումը եթէ երբեք սխալ մը կը համարին պահպանողականները, գոնէ պատասխանատուութիւնը արդի գործողներուն վրայ ձգելու չին:

Թիւրքերուն համար միեւնոյնն է թէ այդ նպատակին դիւանագիտութեամբ պիտի հասնինք, յեղափոխութեամբ կամ բարեկարգութեան սկզբնաւորութեամբ: Թշնամին նպատակն է եւ ոչ թէ միջոցը: Ապստամբութեան քարոզիչ թերթ մը ունեցողը թիւրքիոյ մէջ կ'ենթարկուի միւսնոյն պատմին ինչ որ կը վճռուի անոր սրուն քովէն կ'ելլէ 61րդ ին իրագործումը եւրոպական պետութիւններէն ու սուլթանին բարի կամեցողութենէն սպասելու յորդոր կարգացող թերթ մը: Ա՛ն որ հանգարտօրէն բարեկարգութիւն պահանջել կը յանձնարարէ, ա՛ն որ ապստամբութեան դիմելու հրաւեր կը կարոյայ, երկուքն ալ հաւատարապէս յեղափոխական կը նկատուին թիւրքիոյ մէջ: Իզմիրեան պատրիարք խաղաղասէր եկեղեցական մըն էր, իրաւունքի եւ պարտքի սկզբունքներուն քարոզիչ, օրինական միջոցներով միայն բարեկարգութիւն պահանջող, եւ սակայն ոչ մէկ Հայ այնքան ատելի է սուլթանին որքան այդ խաղաղասիրական միջոցներով բարեկարգութեան հետամտողը. սուլթանը աւելի դիւրաւ կրնայ հաշտուիլ ո՛ր եւ մուկնոս ուրաճիլի քան հանգարտաբարոյ Իզմիրեանին հետ:

Պահպանողականները սերմն իրենք իրենց հետ արաւմաբան ըլլալու համար նախ պէտք է դատապարտեն խրիմեանը, Ներսէսը, Իզմիրեանը եւ... իրենք զիրենք: Բայց այդպիսի ծայրայեղութեան դիմելու պէտք չի կայ: Ամենքն ալ ազգային գաղափարներուն եւ զգացումներուն գործադիրները եղան, եւ հայ ազգը վաւերացուց հայկական խնդրին պաշտօնական ծնունդը խրիմեանի ձեռնարկներովը, Ներսէսի կողմէ հայկական պատգամաւորութեան մը առաջումը Պերլին, Իզմիրեանի մերժումը Միւնիխ պէյի առաջարկներուն, Գուս-Գարուի եւ Պապը-Ալիի ցոյցերը, Աշըգեանի եւ Մագսուտի տապալումը: Ու դեռ ոչ ոք այդ ամէնուն սխալ ըլլալը կրնայ վճռել:

Ո՛չ, չենք կորսուած: Հայկական դատը կը նմանի նաւու մը զոր հայ ժողովուրդը պատրաստեց տարիներու ընթացքին մէջ, զանազան նիւթերը իրարու քով գնելով: Մատախապատ օր մը ալէկոծեալ ծովուն մէջ նաւը խրեցաւ, բայց ընկղմելու վտանգ չի կայ, եթէ փութանք զայն ջրին երեսը հանել: Այդ աշխատութիւնն է որ կը պահանջուի: Ի՛նչ է քննադատներուն ծրագիրը. ո՛ր է իրենց գործունէութիւնը: Այսօր Հայոց մէջ կայ մարմին մը որ Հայ ազգին, Եւրոպայի եւ թիւրքիոյ իրական կացութեան գիտակցութիւնը ունի, եւ յատակագիծ մը պատրաստած է խրած նաւուն փրկութեանը համար, ու զայն հանգարտօրէն կը գործադրէ: Արդեօք սխալնո՞ր կ'ընէ. չենք կարծեր. բայց ոչ ոք ապահովապէս կրնայ ապագայ մը երաշխաւորել, ուստի ենթադրենք թէ օր մը տեսնուի թէ այդ գոր-

ծող մարմինն ուղղութիւնը սխալ եղած է. ապահովաբար էն ուժգին բողոքի ձայները պիտի լսուին քննադատ վաճառականներէն: Եւ սակայն ի՞նչ կ'ընեն հիմա. ո՞ր է իրենց գործունէութեան նշանը, ո՞ր է իրենց մամուլը ժողովրդին մտքին առաջնորդութեանը համար, բան մը կ'ընեն: Ո՛չ: Պահ մը իրենց իրաւունք սանք. անցեալը սխալներով լեցուն է, պէտք չէր սս ընել, պէտք չէր ան ընել: Հիմայ:

Երբ Նաբոլէոն Գ. Բրուսիոյ դէմ պատերազմելու կը պատրաստուէր, Օրէնսդիր Մարմինն մէջ սակաւաթիւ եւ ընտրութեան նշաններու խումբ մը նախատեսելով ազիտաբեր հեռանկարները ուժգնապէս զիմազրեց պատերազմի յայտարարութեան, բայց կառավարական երեսփոխաններէն իբր «Բրուսիոյ ծախուածներ» զրոյարաուեցաւ: Պատերազմին ելքը իրականացուց երկիւղները այդ խումբին որուն պետն էր Թիէր: Եւ սակայն Թիէր ժամանակ շանցուց զայրազին բողոքներով, «Նայեցէք, խօսքս մտիկ չըրիք, ասանկ կ'ըլլայ վիճակիդ. քաշեցէք որ սորվիք:» Ասանկ ստորին վրէժնորդութեամբ ժամանակ շանցուց, գոտեպինդ սկսաւ աշխատիլ: Սասակաշունչ ձմրքն մէջ այդ ձերուին Եւրոպայի մէկ ծայրէն միւսը վազեց հայրենիքին օգնութիւն մը գտնելու համար. ու յետոյ սինչեւ վերջին շունչը աշխատեցաւ, զործեց, մաքառեցաւ: Ճշմարիտ հայրենասէրն ան էր:

Իրաւունք ունինք քննադատներէն զորք պահանջելու: Թո՛ղ այդ մարմինն հակառակ ուղղութեան հետեւին, հող չէ, բայց գործեն: Հաւանօրէն պիտի պատասխանեն. «Մենք չէզոք կը մնանք:» Չէզոքութիւնը սակայն արգարացում չէ, մանաւանդ քննադատողներուն համար: Ժողովուրդ մը երբ վաճառաւոր վիճակի մէջ կը գտնուի, չէզոք հանդիսանաները վատեր են: Ասիկա ճշմարտութիւն մըն է սր շատանց է ըսուած:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅԵՐԸ ԱՆՑԵԱԼԻՆ ՄԷՁ (1)

Պ. Կ. Մասթերօ քաղաքական եւ զրական լրագրի մը մէջ հրատարակած է յօդուած մը՝ «Հայաստանի մէջ Հայոց նախորդները» տիտղոսով: Կը համարձակիմ ի վեր հանել այդ յօդուածին մէկ բանի անճշգումութիւնները, որոնք ցաւալի են մանաւանդ անոր համար որ թիւրք պաշտօնական մամուլը փութաց զանոնք գործածել իր տեսակ մը անարդարանալի յաւակնութիւնները արգարացնելու: Ու-

(1) Պ. Կ. Բ. Բասուաշեան, որ ծանօթ է նախահայոց բնեւագիր արձանագրութեանց վրայ կատարած իր ուշիմ ուսումնասիրութիւններովը, «Ուրվիւ տէ Ուրվիւ» ի վերջընութեան մէջ (18 ապրիլ) հրատարակած է այս շահեկան յօդուածիկը իբր պատասխան ֆրանսացի նշանաւոր արեւելագէտ Կ. Մասթերոյի մէկ քրոնիկին («Ճուռնալ տէ Տէպո»յի մէջ հրատարակուած) որ անտխոր է եւ անիրաւ կը Հայոց անցեալին համար: Պ. Բասուաշեան շնորհատութիւն է իր այնքան հմտայից որքան խրոխտ պատասխանին համար:

րիշ տեղ (1) ապացուցած եմ թէ, Տիգրաթ-Պիլեսեր Ա. ի բնեւագիր արձանագրութեանց համեմատ (Ք. Ա. դէպի 1123), «Հայաստանի մէջ Հայոց նախորդները» արդէն գոյութիւն ունէին Ճ.Բ. Կարուն եւ թէ Ուրարդի թագաւորութիւնը ձեւացած էր Ճ.Բ. Կարուն Ք. Ա.: Բայց Պ. Մասթերօ կ'ըսէ. «Ուրարդուն պատմութեան մէջ առաջին անգամ կ'երեւնայ 860ին մօտ, այն միջոցին ուր հին աշխարհին ամենէն երեւելի աշխարհակալներէն մէկը, Ասորնագիրաբաւ, Նինուէի վրայ կը տիրէ (':)»

Բայց աս չէ կարեւորը:

Պ. Մասթերօ կ'ըսէ թէ «արդի Հայերը, մէկ տնգամ միայն՝ Տիգրանի օրով՝ որ հռչակաւոր Միհրպատի անհաւատարիմ դաշնակիցը եղաւ, աշխարհակալ պետութիւն մը կազմեցին եւ Ասորիքի ու Միջագետքի գաշաբը իջնելով, փորձեցին կայսրութիւն մը հիմնել:» Պ. Մասթերօ մոռցեր է Արտաշեսը եւ Զահրիպը, որոնք Անտիոքոս Գ. Մեծին օրով (222-186) հիմնեցին Մեծ Հայքի եւ փոքր Հայքի երկու անկախ թագաւորութիւնները (190 Ք. Ա.) — բաւական առաջ Տիգրանէն (97-56). Ստրաբոն իր Աշխարհագրութեան մէջ այդ հայ թագաւորները կը յիշէ, Ճ.Ա. 528-532: Հին գրամագիստութիւնը այս երկու անկախ թագաւորներէն աւելի հետու կը աման մեզ. Արշամ թագաւորին մէկ դրամին համեմատ՝ մինչեւ 230 թուականը կ'երթանք կը հասնինք՝ Քրիստոսէն առաջ, հետեւաբար Տիգրանէն 133 տարի առաջ: Սելեւկոս Նիկատորի (312-280) ժամանակակից Արգուարդի վրայ չեմ խօսիր, սրուն Դիոդորոս Սիկիլիացին թագաւոր տիտղոսը կուտայ: Բայց թողունք որ Պ. Մասթերօ խօսի. «Հայերը, կ'ըսէ, իրենց արդի հայրենիքին հողին վրայ իրենց նախորդ ունեցան Հերոդոտոսի յիշած Ալարոդեաններէկամ բնեւագիր արձանագրութեանց Ուրարդեանները. բայց եթէ ներորդ Կարուն կիմերեան մեծ արշաւանքները զանոնք շտիջախեցին, Մարք զանոնք՝ զրեթէ առանց զիմազրութիւն գտնելու՝ նուաճեցին, արդի Հայերը զանոնք մղեցին Երասխի գաշաբուն մէջ, եւ երբ Դարեհ իր պետութիւնը սատրապութեանց բաժնեց, Ուրարդու թագաւորութիւնը բարձրովին անհետացած էր:» Ես աւել. բայց թագաւորութիւն մը, ժողովուրդ մը եւ մղելու համար պէտք է բաւական զօրութիւն ունենալ. ուրեմն «եթէ ներորդ Կարուն մէջ» Հայերը ունէին իրենց անկախութիւնը եւ բաւական զօրութիւն մը՝ Ուրարդեանները ետ մղելու համար: Այս չափը կը բաւէ ցուցնելու թէ Տիգրանէն առաջ Հայք «աշխարհակալ պետութիւն» ունեցած են: Եթէ Տիգրան «արքայից արքայ» կոչուած է, ոչ թէ միայն իր երկրին միւ թագաւորներէն զանազանուելու համար է, այլ նաեւ վասն զի նուաճեց Ասորիքը, Պաղեստինը եւ Միջագետքը. Մարաստան, Ատրպատական եւ Կորուիք իր հպատակներն էին. Աղեքսանդր Մակեդոնացիին ըրածին պէս՝ ամբողջ Ասիան գողացուց:

Տիգրանէն ե՞տքը:

Տիգրանէն ետքը նոյնպէս շատ մը անկախ թագաւորներ կը գտնենք, որոնցմէ ոմանք զրաֆներու վրայ կոչուած են «թագաւոր թագաւորաց», ինչպէս Արտաւազդ Ա. եւ

(1) «Արձագանք», թիւ 96, — 22 օգոստոս 1897:

Տիգրան Գ. : Սասանեանց եւ Բիւզանդեան կայսրու-
թեան ժամանակ՝ Հայաստան անկախ էր. այս երկու
պետութիւնները կը փոփաքէին դաշնակցիչ Տրդատի (286
-341), Խոսրով Բ.ի, Տիրան Բ.ի եւ Արշակ Բ.ի (363-
381) հետ :

Բագրատունեաց ժամանակ՝ Աշոտ Գ. (952-977),
ինչպէս Աշոտ Բ., Շահըն շահը (914-928), բոլորու-
 վին անկախ էր : Այս անկախ գիրքին շնորհիւն է սր իր
եղբայրներէն մէկուն տուաւ կարուց թագաւորութիւնը :
908ին նոյնպէս Արծրունեաց անկախ Հարստութիւնը կ'իշ-
խէր Վանայ կողմերը :

Վերջապէս ինչ պիտի ըսուի Ռուբինեանց Հարստու-
թեան, որուն գրաւները կը գտնուին Ֆրանսայի Ազգային
Մատենադարանին մէջ, դասաւորուած՝ Ֆրանսացի ող-
բացեալ գիտնական արեւելագէտ Վիքթոր Լանկուայի
ձեռքով :

Ճիշդ է թէ Հայք քանի քանի անգամ իրենց զբաղի-
 ներուն լուծին տակ մտած են, բայց սրտամականապէս
անհերքելի է թէ իրենց անկախութիւնը ունեցած են՝ ինչ-
պէս Յունաստանն ու Պուրկարիան :

Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Զ.

1890—1891

ԴԻԿՏԱՏՈՐՈՒԹԻՒՆ ԱՐԻԿ ԷՖԷՆՏԻ ՈՒՆՃԵԱՆԻ

Երբ 1889ին նոր Քաղաքական ժողովը ընարուեցաւ,
խոհեմութիւնը պարտաւորեց Ազգային ժողովը կառավա-
րական երկու անձնաւորութիւն, Նորատունկեան Գաբրիէլ
եւ Ունձեան Արիկ Էֆէնտիները, այդ մարմին մէջ զետե-
ղել : Առաջինը հրաժարական տալով բնաւ չմասնակցեցաւ
վարչութեան գործերուն. երկրորդը մեկուսացեալ մնաց,
Յուլիս 15ի դէպքերէն ետքը Աշոտեան Խորէն պատրիար-
քը աթոռը վերադարձնելու խորհուրդը յղացուած պահուն,
Արիկ Էֆէնտի Ունձեան ստանձնեց ժողովականի պաշտո-
նը, ու այդ օրէն մինչեւ 1891 յուլիս բացարձակապէս
վարեց պատրիարքարանին գործերը, իբր գիկատուոր,
շնորհիւ տիրական մարդու յատկութիւններուն որոնց առ-
ջեւ ո՛չ միայն ամբօխը կը խոնարհի այլ եւ սակաւաթիւ
անգամ ունեցող մարմինն ալ, երբ զօրեղ նկարագիրը
միայն մէկ անձի մէջ երևան կուգայ :

Սեղանաւոր, վաճառական, յանձնակատար, Արիկ
Էֆէնտի գերազանց տիպարն է այն Հայերուն որոնց ան-
հրաժեշտ պէտք ունին թիւրք փաշաները իրենց նիւթա-
կան շահերուն խնամատարութեանը մէջ : Երբ Մահմուտ
Ճէլալէտօին փաշա ելմտական նախարար էր, Շէյխ-Իւլ-
Իսլամը իր բարդուած ամսականներուն վճարուածը ինչորեց

ստիպողական պէտքի մը առթիւ. մերժողական պատաս-
խան ստացաւ, Մալիէն պատրաստ դրամ չի կար : Դեն-
պետը Արիկ Էֆէնտիին գիմուժ ընելով ամսականին թուղ-
թերը անոր կոտորել տուաւ. հայ սեղանաւորը Մալիէն
անմիջապէս դանձեց գրաւները, բնականաբար շահէն
պէտք եղած բաժինը հանելով ելմտական նախարարին :
Եղելութիւնը իմացուելով Շէյխ-Իւլ-Իսլամը ուղղակի
սուլթանին բողոքեց. ինք ներկայացուցիչ խալիֆին, պե-
տական դրամը իրեն զլացուէր, մինչ Մալիէն գանձարու-
նը կեալուրին առջեւ բաց կը մնար : Սուլթանը ժպտեցաւ,
ու Մահմուտ Ճէլալէտօին փաշան ուրիշ պաշտօնի կոչեց :

Արիկ Էֆէնտին օրուան նախարարներուն մարդն էր,
ու օրուան նախարարներն այ Արիկ Էֆէնտիին մարդիկն
էին : Ստորագամ Բեհամիլ փաշա մասնաւոր յարգանք ու-
նէր Արիկ Էֆէնտիին համար, որուն անձնական գործերուն
հօր պաշտպանութիւն չէր զլանար : Սեղանաւոր-վաճա-
ռականը ներքնապէս բարեկամ էր ներքին գործերու նա-
խարար Միւնիւր փաշային, ու առեւտրական շահակցու-
թեամբ կապուած անոր հետ : Թիւրք փաշաներու մօտ քա-
ղաքական ժողովականին այս կացութիւնը բացառիկ ազ-
դեցութիւն մը կը պարգևէր իրեն պատրիարքարանին մէջ :

Ու ազգին ալ ատելի չէր եղած Արիկ Էֆէնտի, և կա-
րելի է մինչեւ իսկ ժողովրդական համարել զինքը : Իր ա-
նունին տարածուած կը սկսի հայրենասիրական բարեգոր-
ծութեան թուականի մը : « Հայաստանի Սուլիսց Յանձ-
նաժողովին » անգամ, իր պաշտօնակիցներուն հետ ինքն
ալ ազգային շնորհակալութեան իրաւունք մը ստացաւ :
Կեդրոնական վարժարանին հիմնադիրներէն մին, յարա-
տեւ կանոնաւորութեամբ եւ սրտեւանդն ոգեւորութեամբ
աշխատող մը միշտ : Արմաշի զպրէվանքին գրիթէ միակ
ստեղծողը, ամեն տեսակ զոհողութիւններու յանձնաւոր-
ութեամբ կը գուրգուրար այդ հաստատութեան վրայ, ինչ-
պէս շերմեանդ վանահայր մը իր վանքին : Կրօնաւեր-
անհետացած սերունդի մը ըմբռնութիւնովը, ամէն հայ ե-
րիտասարդ եկեղեցասիրութեան կ'ուզէր բռնապատել,
չկրնալով ընդունիլ մտքի ազատութեան իրաւունք հանդէպ
քրիստոնէական կրօնքին, մասնաւոր հանդէպ Հայոց եկե-
ղեցիին : Այդ մարդուն հանրային կեանքի հաշուեկշիւին
մէջ երեւան չէր ի գար անողոք դատապարտութեան վճար
ինթարկուելիք ո՛ր եւ է գործ : Իր սխալները՝ տարիքի, բնա-
ւորութեան, ուսումի պակասութեան սխալներ, միայն սա-
կաւաթիւ հրապարակագիրներու քնննադատութեան նիւթ
կը մատակարարէին, բայց միշտ այն ներդաւաճութեան
շեշտովը զոր բարե գիտաւորութեան մեղմացուցիչ պարա-
գան կը թելադրէ :

Թիւրքերուն հետ իր յարաբերութիւններուն մէջ Արիկ
Էֆէնտի ինքզինքը ակնածելի ընծայելու գաղտնիքը իւ-
րացուցած է : « Բայա » ի ծնունդին գիտակցութիւնը առանց
երբեք կ'որոնցնելու, իսլամին բռնապետութեան յարգանքի
հարկը կը մատուցանէ, նոյն իսկ մտերմական յարաբե-
րութիւններուն մէջ, սրպէս զի երես չհանէ փաշան. բայց
նաեւ խտտապահանջ ցեղային արժանապատուութեան,
որուն հետ ի մի ձուլուած է հայ անհատին մարդկային
արժանապատուութեան զգացումը : Իսլամին « ցած Հայ »

որակած Հայուն տիպարն է, այսինքն ցեղային պարտութեանը մէջ իսկ տոհմային զոռոզութիւնը պահպանող Հայը, գոռոզութիւն որ երեսան կուգայ ազգային կրօնքին նախանձահինդրութեամբը, ըսինք մոլեռանդութեամբը, ու կը հաստատէ բարոյական մեծ ուժի մը գոյութիւնը:

Կարապետ Էֆէնտի Շահպաղ երբ խաւովութիւնը ընդունեց, իրիկուն մը Գատը-գեղի շողենաւին մէջ բարձրաստիճան իսլամ անձնաւորութիւններ կ'ուզէն նեղը դնել կրօնամոլ Աբիկ Էֆէնտին, ուստի եւ, իբր թէ կատակով, կ'ըսեն:

—Է՛հ, Աբիկ Էֆէնտի, Շահպաղ Էֆէնտին ալ իսլամ ըրինք, ճշմարիտ կրօնքը ընդունեց:

—Չարմանալի հրաշք, կ'ըսէ արհամարհական հեղուութեամբ՝ իր ազգային-կրօնական զգացումներուն մէջ վիրաւորուած Հայը, մենք ան մարդը քսան տարի է քրիստոնեայ չկրցինք ընել, որ մը եկեղեցի չկրցինք տանիլ, ու դուք անիկա մէկ օրուան մէջ իսլամ էք ըրեր:

Հայուն թաքուն ուժն էր որ երեսան կուգար. այդ կրօնամուլ Հայը չէր կրնար զիջում ընել թէ ճշմարտապէս քրիստոնեայ Հայ մը կարող է երբեք իր կրօնքը իսլամութեան հետ փոխանակել:

Երբ քաղաքական յանցանքներու ամբաստանութեամբ Աբիկ Էֆէնտի 1896ին թրքական դատարանին ներկայացաւ, իր արժանապատուութիւնը բարձր պահեց: Մերժեց ամբաստանեալներու յատկացած ամոտակը նըստիլ: «Ա՛յ իմ տեղս չէ՛» պողոպ այդ հինաւորեց պահպանողականը:

Իբր քաղաքական մարդ, Աբիկ Էֆէնտի, իր բոլոր կրօնամուլ քրիստոնէութեամբը, երկրին իսլամ սուլթանին յարած է, անձնօրէութեան հասնելու աստիճանով, զի մնացորդ մըն է այն հին սերունդին որ կը կարծէր թէ Հայ ազգայնութեան շահերը իսլամական հովանաւորութեամբ կը պահպանուին անքոյթ: Թէեւ սուլթանասէր, բայց եւ այնպէս Աբիկ Էֆէնտի չի պատկանիր Դրան սպասարկու այն Էֆէնտիներուն որոնց աչքին՝ ազգին գէմ դաւաճանութիւնը իրենց ամենէն զնահատելի տիտղոսը կը համարուի թրքական շնորհներու վայելումին համար:

Աբիկ Էֆէնտի՛ կէս դար առաջ ծնած՝ ոչնչաւոր պիտի հանդիսանար ամիրայութեան մէջ: Կամքի տէր բայց նաեւ պզտիկ-մարդ ամիրային տիպարը: Թիւրքին հետ յարաբերութիւնները, կրօնասէր-բարեգործի իզձերն ու գործերը խրոխտ ու համակրելի ամիրան կը յիշեցնեն: Բայց հիւանդ հոգին օրուան տափակութիւններուն մէջ միշտ քաշկռատուող, չի կրնար բարձրաթոնիլ ուրնալ բարոյական այն բարձունքը ուրկէ իրապէս գորեղ ւարդուն սիրտը հեշտութեամբ կը պարարի երբ տկարներուն գէմ սխալալութիւնը կարեկցութեամբ կը փօխարինէ: Սակայն փոքրիկ հակառակորդներու գէմ գթութիւնը, որ թերեւս արհամարհանքի պերագոյն արտայայտութիւնն է, շատ նրբին հաճոյք մըն է զոր զգալ կարենալու համար մարդկային բնաւորութիւն մը Գողգոթայի արիւնին քիչ մը ժառանգորդ ըլլալու է: Պզտիկ սիրտը վեհանձնութեան ասպնջականը ըլլալու անընդունակ է: Զատիկ շաբաթ ի-

րիկուն մը Աբիկ Էֆէնտի Գատը-գեղ աստիճանութեան կը յանձնէր եւ բանտարկել կուտար երիտասարդ մը որ իր հրամանին անաստելով դացած կեցած էր եկեղեցիին դատը, այն իրիկունը մեծատուններու դասակարգին յատկացուած: Կրօնական-ազգային մեր բոլոր ասանդութիւններուն գէմ մեղանշող սխալալութիւն:

Շատ անձուկ միտք մը, Աբիկ Էֆէնտի սերիշներուն, մանաւանդ իր համոզումով տկար համարուողներուն, չուզեց կամքի, գառողութեան, սեփական համոզումի իրաւունք ճանչնալ: Գտնալով պատրիարքարանի զիկատար վարիչը, պատրիարք ու ժողովական հրամանին տակ ունենալով, «բաւնցքի վարիչը» անուանուեցաւ:

Բանապետական ձգտումներու շատ ձեռնտու էր Պոլսոյ ազգային կացութիւնը: Հնչակեանները բանտարկեալ, փախստական, կամ խիստ հսկողութեան ենթակայ, կուսակցութեան ուժը և գործունէութիւնը առժամապէս ջլատուած կրնար համարուիլ, ուստի եւ պատրիարքն ու կառավարութիւնը ազատ շնչելու քաջութիւնը կարող էին ունենալ: Ա՛յ ոչ ոք յիշող Մուսայի պատին, ա՛լ մոռցուած Էրզրումի ջարդը, ա՛լ ցիրուցան Համագումար ժողովը, ա՛լ անյուշ եկեղեցական առանձնաշնորհումներու խնդիրը, ա՛լ քնաշինջ Հայաստանի բարեկարգութիւններու հարցը. մեռելական լուսութիւն, գերեզմանին հանդարտութիւնը:

Եւ սակայն սուլթանն ու զինքը շրջապատողները ներքնապէս խռովեալ էին ապագայի երկիւղալի նախազգացումներով: Առերեւոյթ հանդարտութեան մեծամեծ խռովութիւններ յաջորդելու երկիւղը կը տիրէր: Թիւրքիոյ ազնաններուն պատմութիւնը յիշելով կը մտաբերէին թէ ամէն մահաբեր հարուածի սկզբնաւորութիւնը կը թուազրուի իլրատումներէ որոնք անդադրում շարունակութեամբ յարատեւելով միշտ յանգած են Թիւրքիայէն հողային զանգուածի մը անջատումին: Սուլթանին առաջին քարտուղար Սիւրէյա փաշա Երլտըղին մէջ տիրող այդ վախերուն քօղը երբեմն վեր առաւ Ալըզեան պատրիարքին աչքերուն առջև:

— Խոռովութիւնները կրնան Անատոլիոյ մէջ արիւնահեղութիւն առաջ բերել, ու օտարներուն միջամտութեան եւ տիրապետութեան առիթ հայթայթել: Այն ատեն ո՛չ մեզի, ո՛չ ձեզի: «Նէ՛ սիզէ, նէ՛ պիզէ», քարտուղարին բուն իսկ բացատրութիւնովը:

Խելացի եւ հեռատես պատրիարք մը, ու քաղաքագէտ բաց մտքով վարչապետ մը դեռ կրնային, օղտուելով կառավարութեան այս մտահոգութիւններէն, ազգին նպաստաւոր կարգադրութիւններ ձեռք բերել, ու, իրենց պահպանողականի կոչումին համեմատ, հանդարտեցնել հանրային միտքը, գոնէ բաւական երկար ատենի մը համար: Ալըզեան պատրիարք պահ մը կարծես մտքէն անցուց օգտուիլ թէ՛ սուլթանին երկիւղներէն և թէ՛ Հնչակեաններու զինադադարէն: Իր համոզումն էր — հիմնաւոր կամ անհիմն, այդ տարբեր ինչկեր, — թէ սուլթանը վերջին գէպքերէն ցնցուած, տրամադիր է հետզհետէ բարւոյն Հայերուն վիճակը, բայց իր անձնասիրութեանը գոհացում կը փափաքի, հայկական սպանալիքներու առջև սեղի տուած ըլլալու երեւոյթէն խորշիւղով:

—Յեղափոխականները գանակի ծայր ցոյց տուին, կ'ըսէր պատրիարքը, բայց զէնքերնին թո՛ղ ալ աչքէ հեռու պահեն. տուած այսքան վախերնին կը բաւէ. հիմա պէտք է քաղցրալեզու երեւնալ օգուտ քաղելու համար: Հարուածէն հտըր փայփայանք:

Պատրիարքը պատասխան ստացաւ թէ յեղափոխականներուն նպատակն է Հոյաստանի վիճակին բարոքումը, որուն համար ամէն զոհողութեան յօծարակամ են: Յեղափոխականին համար աւելի մեծ զոհողութիւն է, երբ հանգամանքները պահանջեն, քաղցրալեզու երեւնալը քան թէ անձնութիւնը: Ի հարկին այդ մեծագոյն զոհողութիւնն ալ ընել անկարելի չէ:

Այս տեսակ կարծիքներու փոխանակութիւն մը եղաւ, սակայն տեսանք թէ 1891էն սկսեալ Պոլսոյ մէջ երեք տարի յարատեւող հանդարտութիւնը որպիսի կոյր, անհետատես ծայրայեղութիւններու մղեց թէ թիւրք կառավարութիւնը եւ թէ պատրիարքարանը, որ ինքզինքը Հընչակեան հսկողութեանն ազատ համարելով, ա'լ քառարշաւ ասպատակեց ազգային իրաւունքներու սահմանները ամէն ինչ քարուքանդ ընելու համար, սկսեալ Սահմանադրութեան: Բայց նահանջը ահեղ եղաւ 1894ի մարտին ու մայիսին:

Եթէ 1891ի սկիզբները պատրիարքին քով ու վարչութեան գլուխը գտնուէր Արիկ Էֆէնտի ինչ ինչ առաւելութիւններուն՝ զարդացած, լայն ու հեռատես մտքի զօրութիւնը միացնող անձնաւորութիւն մը, կամ գէթ Արիկ Էֆէնտի իր մէկ տարուան մեկուսացեալ զիբքէն զործունեայ պաշտօնավարութեան մը անցած չըլլար, տարակոյս չի կայ թէ գէպքերուն ընթացքը բոլորովին տարբեր պիտի ըլլար:

Այժմ պահ մը կանդ աճնենք Պատրիարքարանին շուրջը դեգերելէ եւ ակնարկ մը տանք կառավարական շրջանակներու մէջ տեսնուած նոր երեւոյթի մը որ շատ ազդեց մեր գործերուն վրայ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅ ՄԻՏՔԸ ԵՒ ՐՈՊԱՅԻ ԱՌՋԵԻ

Բարիզէն կը գրեն մեզի.

Այս տարուան Սալօնին քանի մը հայ արուեստագէտներ մասնակցեցան նորէն: Պ. Զաքարեան, որ Բարիզի ամենէն քննադատուած վարպետներէն մէկն է «նաթիւր-մոսթ»ի ճիւղին մէջ, երկու փոքրիկ հրաշակերա ցուցադրած էր այս տարի: Պ. Շապանեան ունէր ծովանկար մը, թափանցիկ ու փափուկ գոյներով: Պ. Էտիար Շահին ի տես դրած էր երկու նկար: Առաջինը, «Ապաստանարանը», թշուառութեան սարսոտգլեցիկ տեսարան մըն է, խեղճ խցիկի մը մէջ կին մը իր երախային հետ անձնապան՝ անկողնին վրայ փայտացած, — մահուան քերթուածը իր ամբողջ դառն արհաւիրքովը խորապէս զգացուած: Երկրորդը կը ներկայացնէ գործաւորներու ընտանիքի մը ներքին կեանքի խոնարհ սրտաշարժ պատկեր մը, իրիկ-

ուան տոգոյն անուշ պահուն, տաժանքի օրէն դարձող մարդը որ իր պզտիկ բոյնին մէջ եկած է հանդիլ, եւ խնամա խնդաղատալից կիրը որ ճաշը կը պատրաստէ: Պ. Շահին երեսասարդ արուեստագէտ մըն է որ իր առաջին փորձերով իսկ ուշադրութիւն գրասեց. իր ճշտումն է կեանքը, իրական բարախուն կեանքը, տաք տաք հաղորդել կտաւին, մասնաւորապէս ցաւի, խեղճութեան, մութի կեանքը. առաջին տարին, ցուցադրած էր «Աղքատ մը», անցեալ տարի «Փողոցի անկիւն մը», երկու սուր գետնախնձորով իրենց իրիկուան ճաշը փողոցին մէջ բնող ողորմելի ընտանիքի մը տեսարանը, որ «Ֆիկադօ»ի հանրածանօթ քննադատին Պ. Արուէ Ալէքսանտրի կողմէ բնագործակ գնահատման մը արժանացաւ. այս տարի իր «Ներքին կեանքի պատկեր»ին վրայ «Թան»ի քննադատը հետեւեալ տողերը կը գրէ. «Պ. Շահինի էն թէ ուր է օրը, պարզօրէն յղացուած, այդ գործաւորներու ներքին կեանքի տեսարանը, կիրճ կերակուրը պատրաստելու վրայ, այրը՝ սեղանին առջեւ նստած, ըստ իս՝ անհունապէս բարձր շահեկանութիւն մը ունի:»

Պ. Շահին կոչուած է կարեւոր տեղ մը բռնել Քրանսական նկարչութեան մէջ՝ իրբեւ իրական կեանքի արտայայտիչ:

Ուրիշ հայ անուն մըն ալ գովեստով յիշատակուեցաւ վերջերս Քրանսական լրագիրներու մէջ. Պ. Կարապետ Քալֆեան յաջողեցաւ «Ժուռնալ» լրագրին «Հանդէսներու Սրահ»ին մէջ տրուած ներկայացման մը մասնակցիլ և «Համլէդ»էն մենախօսութիւն մը արտասանել հայերէն լեզուով: Պ. Քալֆեան մէկուկէս տարիէ ի վեր Թիֆլիսէն եկած է Բարիզ գերասանութեան արուեստին մէջ կատարելագործուելու: Բնութեանն օժտուած է հոյակապ գլուխով մը, ճապուկ ու նուրբ արտայայտութեամբ, եւ «միմիք»ի առաջնակարգ կարողութիւններով: Ոմանք չափազանց հապճէպ գատում մը սենեցան «նոր Ազամեան» կոչելով այս յուսատու սկսնակը. Պ. Քալֆեան, որուն մտաւորական զարգացումը գեռ հեռու է հասնելու այն ընդարձակ հմտութեան զոր Ազամեան ունէր, եւ որ արտասանութեան ու խաղացումքի տեսակէտով բազմաթիւ սրբազրելի կէտեր ունի, ինքն իսկ անշուշտ չի մտածեր որ մէկ հարուածով կարելի է Ազամեան կամ Մունէ-Սիւլի ըլլալ: Մէկուկէս տարուան մէջ Բարիզի արուեստագիտական շրջանակներուն մէջ կարեւոր ծանօթութիւններ վաստակելը եւ Քրանսական ներկայացման մը մէջ իր հայ ողորդակ մասնակցութիւն ունենալ յաջողիլը մեծ պատիւ կը բերէ երեսասարդ գերասանին. եւ ուրախ եզանք կնք գալով «Ժուռնալ»ի, «Ժիլ Պլաս»ի եւ «Լա Ֆոռնա»ի ներբողական գնահատումները: Պ. Քալֆեան շնորհաւորելի է մասնաւորապէս որ հայ լեզուն առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ իր արուեստագիտական գործիք մը՝ բարիզեան հասարակութեան առջեւ. կը մաղթենք իրեն նորանոր յաջողութիւններ, բայց կը մաղթենք մասնաւորապէս որ չչլանալով այս յաջողութիւններէն, շարունակեալ աշխատիլ լրջաբար եւ խոնարհաբար՝ ինչպէս ըրած է նոյն ինքն Ազամեանը՝ որ մինչեւ վերջին վայրկեան ինքզինքը կատարելագործելու հետամուտ էր, եւ ըլլայ իրօք մեծ արուեստագէտ մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Վերջին «ԿԱՊՈՅՑ ԳՐԻՆ» ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԷՆ

ՍՍՍՈՒՆ, ԿԻՆՃ ԵՒ ՄՈՒՇ (1)

Տածկըցած գիւղերը կը գտնուին Կինճի հարաւային, եռնեքուն մէջ որոնք Տիարպէքի զաշար կ'եղերեն, մէկ քանին ալ Սարում Սուի եւ յարակից հովիտներուն մէջ, եւ ուրիշներ ալ՝ Կինճ ու Արտէշին ասնոց ճամբուն վրայ, զէպի ճապաղչուր:

Բառուրէն ու խոպիի հովտէն մեկնելով, ուղիղ զէպի արեւմուտք գացի Բէշարի գիւղախմբին մէջէն ու այցելեցի տաճկցած գիւղերը՝ սահմանակից դաւառակին մէջ: Անկից նսրէն Կինճի ճամբան անի՝ Բիզի վրայէն զէպի հիւսիս եւ այցելեցի Ձիհզէնի գիւղախումբը, անցնելով ճապաղչուրը եզերող լեռները եւ Արտէշինի մօտ ալ Եփրատը: Այս վերջին կէտէն Մուշի դաշար իջայ, անոր արեւմտեան ճայրը:

Հետեւեալ տեղեկութիւնները քաղեցի Բէշարի բնակիչներէն, որ գիւղախմբին կեդրոնն է ու միւտիրի մը բնակավայրը:

1893ի աշնան, Տիարպէքի շարդին ատեն, Սարում Սուի հովտին եւ շրջակայ լեռներուն բոլոր Հայերը Քիւրաներէն թալլուեցան եւ խալաժութիւն ընդունեցին՝ կեանքերն ազատելու համար: Լճէքի ան ատենուան դայմազամը ուժ տուաւ այս շարժումին: Գիւղացիները քիչ շատ պաշտպանութիւն գտան Բէշար բնակող հարուստ Քիւրաէ մը՝ Ահմէտ պէյէն, ու մէկ քանի ուրիշ պէյերէ, որոնք ջանացին ցրուել յարձակողները եւ ազատել քրիստոնեաները: Բայց, անոնց մեկնելէն ետքը, կառավարութիւնը պահեստի զօրքը կանչեց որոնք նորէն յարձակեցան գիւղերուն վրայ. ասոր վրայ Քիւրտները ետ դարձան եկան, ու հետեւանքը սա եղաւ որ բոլոր քրիստոնեաները սաճկըցան: Վեց ամիս ետքը կառավարութիւնէն եկած հրամանին վրայ, որ կարգ մը գիւղերու հազարուցեաց եւ ոչ ուրիշներու — զեկուցման հոգը տեղական իշխանութեանց կամքին ձգուած ըլլալով աւելի, — կրօնափոխները քրիստոնէութեան դառնալու թոյլտուութիւն ստացան եւ Լճէքի (Տիարպէքի շահանգ) շրջանակին մէջ գտնուողներուն մեծագոյն մասը իրենց բուն կրօնքին դարձան: Կինճի սանճաքին մէջ, Նորշէն, Անտէօ եւ Միզազ գիւղերը որոնք Ահմէտ պէյի սեփականութիւնն են, հրաւերէն օգտուեցան, Ահմէտ պէյի թելադրութեամբ, եւ քրիստոնէութեան դարձան: Տահար պէյ, Ահմէտ պէյի հօրեղբորդին եւ Բէշարի այժմու միւտիրը, որ այս կողմերու ամենէն ազգեցիկ Քիւրտն է եւ մեծ իշխանութիւն ունի Կինճի միւթէսարըֆին եւ գաւառին միւս բոլոր Քիւրտներուն վրայ, այնչափ եռանդ ցոյց կուտար Հայերը կողոպտելու, հարստահարելու եւ կրօնափոխ ընելու, որքան իր հօրեղբորդին՝ զանոնք պաշտպանելու: Մահու սպառնալիքով՝ Բիզի, Մուրտա-

(1) Եարունակութիւն Գրգ թիւէն, եւ վերջ:

րիքի, Իզմոնքի, Հերկնշուրի եւ Բէշարի գիւղացիները ըստիպեց իսլամութիւն ընդունելու ու անկից ի վեր քանիցս սպառնացած է սպաննել զանոնք եթէ քրիստոնէութեան դառնան: Որ եւ է քրիստոնեայ կրօնաւորի հետ հազարգակցութիւն արգելուած է այս գիւղերուն մէջ: Մուշա մը կ'այցելէ զիրենք եւ կը ստիպէ մահմետական ծէսերը զործարելու, բայց մինչեւ հիմա փախուստ տուած են թլքատու մէ, թէպէտ քանիցս ստիպողական հրաման ստացած են: Ահմէտ պէյ, որ իր եղբորդիին հետ շատ գէշ է եւ ազատօրէն կը խօսի անոր անգղաժամութիւններուն վրայ, հաստատեց այս ամէնը: Բէշար եղած ատենս շատ առիթ ունեցայ իրեն հետ խօսակցելու, որովհետեւ թիւրքերէն զիտէ: Քառսունըհինգի մօտ նուրբ մարդ մըն է, ազնուական կերպերով, եւ ազատամիտ ու լուսաւորեալ կ'երեւնայ: Այս կողմերուն բոլոր քրիստոնեաները լաւ կը խօսին իր մասին, ու կը վկայեն իր մարդասիրութեանը եւ պաշտպանութեանը ի նպաստ հայ ժողովրդին, 1893ի զէպերուն ատեն:

Բիզ օր մը կեցայ եւ այստեղի ու շրջակայ գիւղերուն բնակիչները քննեցի: Հետեւեալ իրողութիւնները իմացայ.

Բէշարի քիւրա պէյերը, Տահար պէյ, Ամիր պէյ եւ զաւակները, Տերվիշ պէյ, Փաթհա պէյ, Խամայիլ պէյ, Քէրիմ պէյ եւ Եռուսֆ պէյ, իրենց սպասաւորները եւ հետեւորդները զրկեցին 1893ի աշնան, ընդամէնը իբր 300 մարդ, Բիզ, Մուրտարիք, Իզմոնք, Հերկնշուր, Նորշէն եւ նահիէին միւս գիւղերը: Ասոնք թալլեցին Հայերուն տունները եւ առին տարին անոնց արջառը, արմախքը եւ տնական անօթները: Բնակիչները լեռները փախան, ուր ութ օր աստանդական թափառեցան: Յետոյ ելան Բէշարի պէյերուն գացին, որոնք, իրենց զլուխը սնենալով Տահար պէյը, խոստացան խնայել իրենց կեանքին եթէ խալաժութիւն ընդունէին: Տեսնելով որ շրջակայ բոլոր գիւղերը տաճկցած էին, իրենք ալ հաւանեցան: Առին մզկիթը տարին զիրենք Մուսթաֆա ու Մուհամմէտ մուլաներուն առջին եւ մահմետական անուններ տուին իրենց: Իրենց ցոյց տուին թէ ինչպէս կատարելու է լուսացումները, եւ խալաժական աղօթելու կերպերը սորվեցուցին: Կինները Բէշարի քիւրտ տունները սարուեցան եւ հան անուններն փոխեցին: Յիսուն օր Բէշար մնալէ եւ ողորմութեան շնորհիւ ապրելէ յետոյ՝ տեղերնին դարձան:

Անկից ի վեր անցած տասներու թը ամսուան միջոցին, նահիէին շատ գիւղերը քրիստոնէութեան դարձած են, բայց Տահար պէյի եւ իր արքանեակներուն ուղղակի ազդեցութեան տակ գտնուող գիւղերը իսլամ կը մնան: Մուլաներ յատկացուած են զանոնք հովուելու եւ հրահանգելու, եւ պարտաւոր են սուրբ մը վճարելու այդ մուլաներուն, — իրենց ստացուածքին վրայ տասանորդ մը եւ մարդ զլուխ մէկ կօտ արմախք: Իրենց թոյլտուութիւն չի կայ քահանայի երես տեսնելու: Նորածինները անկնունք են, եւ մեռելներնին մահմետական ծէսով կը թաղուին: Մինչեւ հիմա թլքատու մէ փախուստ տուած են, թէպէտ յաճախ կը ստիպեն զիրենք որ հաւանին ասոր: Պէյերը կ'աշխատին կինները ամուսնացնել իրենց քիւրտ հետեւորդներուն, եւ ցեղերը խառնել: Մեծ մասամբ, Հայերը փա-

խուստ տուած են ատկից: Վերջին տասնըութ ամսուան մէջ երեք հարսնիք պատահած է, եւ մուլա մը կատարած է արարողութիւնը: Աղջիկ մը բռնի տոնուած է Մուրաւրիքէն եւ Քիւրաի մը հետ կարգուած Բէշար:

Եօթը հոգիի բացառութեամբ, կրօնափոխներէն ոչ մին պաշտօնապէս ճանչցուած է կառավարութենէն: Այդ եօթը (Պետրոս Միրզոնեան, Բիզի զիւղապետը, Տնօ Թամայեան, Թոմաս Կէնճոյեան, Պատո Մարտեան, Պօղոս Հարչեան, Թոմաս Վարդանեան եւ Պետրոս Հասոյեան), բոլորն ալ Բիզէն, անցեալ հսկտեմբերին Կինճ տարուեցան միւթէսարըրժիւն առջեւ, որ, Տահար պէյին ներկայութեանը, հարցուց թէ կամովին իսլամ կ'ըլլային: Տահար պէյին վախերնուն, յայտարարեցին թէ կամովին կ'ըլլային: Ասոր վրայ միւթէսարըրժը անուննին արձանագրեց, բայց ո՛չ մէկ հայ եկեղեցական ներկայ էր: Չթիփասուեցան, եւ ուրիշ ձեւակերպութեան չենթարկուեցան:

Յիշեալ դաւաճակին զիւղացիները ահ ու սարսափի մէջ են Տահար պէյին: Կը ցանկան քրիստոնէութիւն դաւանել, բայց հետեւանքներէն կը վախնան:

Բիզի մէջ, մուլաները հայ ծերունիներէն մէկ քանին «Սոփու» կարգած են: Ծերունիի մը հարցուցի թէ ո՞վ զինքը «Սոփու» ըրաւ, ու ան անմիջապէս պատասխանեց. «Եւրոպայի Մեծ Պետութիւնները:» Ուրիշ պատասխան չլսող զրուցելու բայց եթէ սա թէ իմ ներկայութիւնս իր զիւղին մէջ ապացոյց մըն էր թէ դո՛ւն Անգլիա չէր փափաքէր որ ինք իսլամ մնար:

Չիհզէնի նահիէն Կինճի արեւմտեան կողմը կը գտնուի, Եփրատի հարաւային ափին վրայ, եւ բնակիչները գրեթէ ամբողջ Քիւրա են: Վեց գլուխ 40 ընտանիքով, որոնք Չիհզէնի գրեթէ ամբողջ հայ ազգաբնակչութիւնը կը կազմեն, իսլամութիւն ընդունած են:

Վալէրի մէջ վեց ընտանիք քրիստոնէութեան դարձած են, բայց, վերոյիշեալ պատճառներով, կը հաւաստեն թէ իրենց համար անկարելի է քրիստոնեայ մնալ եւ ապրիլ:

Չիհզէնի մէջ Չարդ կամ կողպուտ չպատահեցաւ, բայց հայ բնակիչները, Հիւսէյին պէյի (այժմ Վալէրի միւտի), Կէրնոսի Եւրիֆ ազայի եւ Վալէրի մութթար Մոնահ Էլիասի ճնշման տակ, որոնք այս կողմերուն քիւրտ երեւելիներն են, 1895ին տաճկցան ու այսպէս կեանքերնին եւ ինչքերնին փրկեցին: Թէպէտ կը ցանկան քրիստոնէութեան դառնալ, սակայն իրենց թոյլ չի արուի իրենց բուն հաւատքը դաւանել կամ իրենց բազանները տեսնել: Իրենց երախտները անկունը կը մնան, եւ իրենց ամուսնութիւնները ու թաղումները մահմէտական ձեւերուն համաձայն կը կատարուին: Ո՛չ թրիատուած են, թէպէտ յաճախ ստիպում եղած է իրենց, ո՛չ ալ կառուութենէն պաշտօնապէս ճանչցուած: Իշխանութիւնները սակայն լռելեայն իբր մահմէտական կ'ընդունին զանոնք:

Հետեւեալ հետաքրքրական եղելութիւնը բաւական լոյս կը սփռէ թիւրք իշխանութեանց գործածած միջոցներուն վրայ՝ ստիպելու համար հայ քրիստոնեաները որ կրօնքնին փոխեն:

Կինճի Նուֆուս Նազըրի (արձանագրիչ պաշտօնեայ) Հայտար էֆէնտի Չիհզէն էր Ճապաղջուրի Չարդին ատեն, եւ գրագած էր զինուորական տուրքին համար արձանագրելու այն Հայերը որոնք մինչեւ ան ատեն այդ տուրքէն փախուստ տուած էին՝ անուննին ծածկելով: Այդ Հայտար էֆէնտին գեղացիները խաբեց ըսելով որ կառավարութիւնը զինքը զրկած էր՝ մարդ պուխ մէկ լիւրս նպաստ բաշխելու համար, ու այսպէս արու բնակիչներուն մէկ ճիշդ ցանկը ձեռք բերաւ: Յետոյ խելքին փշածին չափ տարի աւելցուց արձանագրուած անձերուն տարիքին վրայ, երեք տարեկան մանչ մը վեց կամ տասը տարեկան արձանագրելով եւ որ ըստ կարգին, որպէս զի կարենայ երեք կամ աւելի տարուան յետեւալ տուրք պահանջել խարդախօրէն: Գործը այդպէս մնաց ան ատեն: Գիւղերը տաճկցան՝ վերոյիշեալ պատճառներով, եւ յետեւալ տուրքերու պահանջումը մէկզի ձգուեցաւ:

Վեց ամիս առաջ, կրօնափոխ բնակիչներուն մասին Կ. Պօլսէն եկած հրամանին վրայ, Վալէրի յիշեալ վեց ընտանիքները իրենքզիրենք քրիստոնեայ յայտարարեցին: Ասոր վրայ, Կինճի կառավարութիւնը մէջտեղ հանեց Հայտար էֆէնտիին խարդախ սոււտարը եւ այդ բնատնիքներէն 8,600 դրուց պահանջեց իբր զինուորական յետեւալ տուրք, մինչեւ ան ատեն այդ տուրքէն փախուստ տուած անձերուն թիւին եւ տարիքին վրայ հաշուուած: Միւտիքը, որուն զիմեցին նախ, իրենց խորհուրդ տուաւ իսլամ մնալ, եւ ըսաւ որ եթէ իսլամ մնային, յետեւալ տուրքի պահանջումը մէկզի կը թողուէր: Կինճի միւթէսարըրժը, որուն երեք անգամ զիմեցին աղերսագրով, յայտարարեց թէ պահանջուած գումարը ուղիղ է:

Տարակոյս չի կայ թէ այդ գումարը ծայրայեղօրէն չափազանցուած է, սրովհետեւ, նոյն իսկ ենթադրելով որ այդ վեց ընտանիքները կրցած են երեքական երախայ ծածուկ պահել չորս տարի, — ինչ որ, թիւրք միւտի ունեցող թիւրք զիւղի մը մէջ, չափազանց անհաւանական է, — տուրքի յետնորդը մարդ զուխ 40 դրուէն 2880 դրուց կ'ընէ միայն: Բայց Կինճի կառավարութիւնը կը մերժէ արձանագրութիւնը ստուգել կամ ինչիւրը վերստին քննել:

Այս հանգամանքներուն տակ, իմ հասնելէս մէկ քանի օր առաջ 830 դրուց վճարեցին եւ կառավարութիւնը լուր գրիկց որ մնացեալը վճարելու պատրաստ գտնուին: Վեց ընտանիքները տեսնելով որ կործանուածը զուտերնին ափ է առեր, եւ իրենց կոչերը անլսելի կը մնան, նորէն իսլամ եղան:

Այս ճնշումը իր ազդեցութիւնը ունեցած է նահիէն այն բոլոր Հայերուն վրայ որոնք կեանքերնին փրկելու համար իսլամութիւն ընդունած են, սրովհետեւ, տեսնելով Վալէրի բնակիչներուն գլխուն եկածը, նախամեծար կը համարին մնալ այնպէս ինչպէս որ են:

Կէրնոսի մէջ, ուր կը բնակի Եւրիֆ պէյը, 25 քիւրտ ընտանիք կայ եւ հինգ հայ ընտանիք (Յովհաննէս Տէրվիշեան, Հասան Բէշտեան, Վարդան Կէրնոյեան, Հասան Մակրոյեան եւ Օսման Վարդանեան): Հայերը

տաճկեցած են: Զանազն զիրենք տեսնել, բայց Երեմի ազան թող չտուաւ, ու երբ ստիպեցի, վրանս զրկեց իբր Հայ ծպտած հինգ ֆիւրա, որոնք իրենց զիրենք ներկայացուցին իբր տաճկեցած ընտանիքներուն մեծերը: Խաբէութիւնը ակնհերեւ էր, որովհետեւ այդ մարդերուն մէկ քանին շատ գէշ հայերէն կը խօսէին, եւ միաները բնաւ, ո՛չ ալ գիտէին հօրերնուն անունները կամ միաներուն վերաբերեալ պարզ մանրամասնութիւններ: Մին, ստուգիւ, քիւրտ աղայ մըն էր, զոր թարգմանս արդէն հարցափորձած էր միջօրէին եւ զոր ճանչցաւ:

Երեմի աղային մասնանիշ ըրի իր սխալը, բայց յամառեցաւ, ու ըսաւ որ ուրիշ Հայ չունէր: Յակարէֆէաւին, իր հրաւրին վրայ, գնաց Հայերուն տունները աչքէ անցընելու, բայց զինքը քիւրտ տուններ տարին ու հաւասանցին թէ զիւզին մէջ ուրիշ Հայ չի կար:

Քրդական աղբիւրէ մը իմացայ թէ այդ հինգ ընտանիքները 1895ին Ճապոնի ջարդին ատեն Երեմի աղայի ձեռքով բռնի տաճկեցած են: Ետքը թղթատուած են: Իրենց թոյլտուութիւն չի կայ քրիստոնեայի հետ հաղորդակցելու կամ քահանային տեսնելու: Հայ առաջնորդ մը, զոր այդ գիւղէն հեռերնիս առինք, վերջէն հաստատեց այս իրողութիւնը: Ըսաւ թէ Երեմի աղան համբաւաւոր էր իր անգլիկոսութեամբը, ու շրջակայքի բոլոր Հայերուն արհաւիրքն էր:

Ամիս մը առաջ հինգ ընտանիքները փորձեցին փախչել, բայց բռնուեցան ու ետ դարձուեցան, ու Երեմի աղան իրենց ըսաւ որ եթէ իսլամ չմտային բնաջինջ պիտի ընէր զիրենք ու ա՛լ մէյ մըն ալ ոչ ոք անուննին պիտի լսէր:

Կէրնոսի պէս աչքէ հեռու եւ մարտանդ տեղ մը, Երեմի աղայի պէս մեծաւորով մը, շատ զիւրին է գործարել այդպիսի սպանալիք մը: Հայերը, այս հանգամանքներուն մէջ, չեն կրնար քրիստոնէութիւն դաւանել եւ ապրիլ:

Ահաւասիկ ցանկը Կինճի այն քրիստոնեայ ընտանիքներուն որոնք իսլամութիւն ընդունած են կեանքերնին փրկելու համար եւ որոնք կը փափաքին քրիստոնէութեան դաճնալ, բայց կը վախնան՝ տեղական հանգամանքներուն ու քիւրտ պէյերուն եւ ուրիշներու ազդած սարսափին պատճառաւ:

Բէշարի նահիէ (Կինճի օսանճաք)

Բէշար	10	ընտանիք
Րիզ	50	«
Մուրաթիք	9	«
Իզմոնք	3	«
Հերիշնուր	1	«

Ասոնք Բէշարի միւսիւր Տահար պէյի եւ նահիէին ուրիշ քիւրտ պէյերուն իշխանութեան տակ կը գտնուին:

Չիզլէնի նահիէ (Կինճի օսանճաք)

Տիարիպոլ	7	ընտանիք
Տարէճէնի	7	«
Քուփար	3	«
Չիմայնիք	6	«
Վալէր	8	«
Կէրնոս	5	«

Ասոնք Երեմի աղայի եւ Վալէրի ուրիշ երեւելիներու իշխանութեան տակ կը գտնուին, ու չեն կրնար քրիստոնէութեան դաճնալ, որովհետեւ անկարող են վճարելու զինուորական տուրքի խարդախուած յետնորդները զորոնք կառավարութիւնը կը պահանջէ եթէ իսլամութիւնը թողուն:

Ընդ ամէնը, 900 հոգի: Այս հաշուին մէջ չէ Ճապոնի ջարդը, զոր կարծեմ Պ. Վօու (Տիարպէքիբի անգլիական գեր-հիւպատոսը) այցելեց եւ որու մասին տեղեկութիւն չունիմ: (1)

* * *

Ընդհանուր կարծիք մը կայ թէ, Անատոլի կեդրոնական նահանգներուն մէջ, քիւրտ եւ հայ գեղացիները, միեւնոյն ցեղէն սերած ըլլալով, այնքան համամասն են զգացումներու, բարքերու եւ գաղափարներու մասին որ, մէկ կրօնքէ ուրիշ կրօնք մը անցնելը, ի բաց անելով բարոյական նկատողութիւնը, շատ ծանր գալու չէ իրենց: Այդ կարծիքին մասնակից չեմ կրնար ըլլալ՝ աչքէ անցընել յետոյ Կինճի Հայերուն կացութիւնը որոնք հիմակ ամէն ատենէ աւելի մահմէտական իշխանութեան գոյրը նետուած են, բռնի թողլով իրենց կրօնքը եւ իսլամութիւնը ընդունելով:

Հայ գեղացին, ուրիշ ազգերու գեղացիին նման, աւելի՛ յարած է իր կրօնքին քան քաղաքացին, եւ հիմակ որ ա՛լ այնքան քիչ բան մնացած է իրեն, հիմակ որ կը թուելու միջոցները ձեռքէն աճուած են եւ իր նիւթական զարգացումը ու անձնական ապահովութիւնը վաճառուած, բնական է որ աւելի սերտիւ եւ ւժով կապուէր իր կրօնքին: Այդ 900 հոգին որոնք հիմն գրկուած են իրենց քահանաներուն պաշտամունքէն, եւ՛ մահուան երկիւղին տակ՝ ստիպուած են մողաներ պահելու եւ անոնց հրահանգներուն հետեւելու՝ մահմէտական ծէսերու կատարմանը մէջ, խորապէս կը զգան իրենց կսկածալի կացութիւնը, ուսքը ձեռքը կապուած գոհի մը տխուր տեսարանը կը ներկայացնեն, իրենց ներկայ յոյսերը եւ ապագայ ակնկալութիւնները՝ անխնայ հարստահարիչի մը բռնաւորութեանը ենթարկուած:

Ի նկատ անելով յետագէմ բռնապետութիւնը որ թիւրքերոյ մէջ ու եւ է յառաջգիմութիւն կամ բարեփոխում կ'արդիւլէ, գծուար է գաղափարել թէ ի՞նչ միջոցներ կարելի է ձեռք առնել՝ այդ գեղացիները մշտական կերպով ազատելու համար իրենց զոհիւններուն ձեռքէն: Մուրանդ ու վայրենի ֆիւրսերու մէջ տեղ կը բնակին, որոնք սպանութիւնը ամէնօրեայ դէպք մը կը նկատեն, կ'օգտէ որ զոհերը իրենք չըլլան, և քրիստոնեաները կա՛մ սպաննուելու կա՛մ իսլամ դաճնալու համար ստեղծուած միայն կը համարին: Բայց նոյն այդ ֆիւրսերը բարերար վիճակ մը ունին սուլթանէն, եւ, թէպէտ հաւանական չէ որ պարզ հրամանները, առանց պատիժներ անօրինելու օրինականներուն դէմ, ու եւ է ազդեցութիւն ունենան — քանի որ ոչ ոք կարող է ստուգել անոնց գործադրութիւնը այդ աչքէ հեռու վայրերուն մէջ, — սակայն եթէ բաւական զօրեղ

(1) Ծ. Խ. Տես «Նոր Կեսոնք» թիւ 6: Պ. Վօուի տեղագրին համաձայն, Ճապոնի ջարդի տաճկեցած Հայերը 76-80 ընտանիքէ կը բաղկանան:

ըլլան առջին անգամ՝ և սուգանք, բանտարկութիւն կամ արտոր անօրինութիւն անհնազանդներուն գէմ, կարելի է որ բազմաթիւ արդիւնքը առաջ բերին: Ամէն պարագայի մէջ, բոլոր ուժովս կը յանձնարարեմ Բէկարի Տահար պէյին ու Կերնոսի Եւրիֆ աղային պատժուիլը, որոնք այս կողմերուն պիտաւոր չար սգիները կը թուին: Եթէ այդ երկուքը մէկտեղ կարելի ըլլար ասկից հեռացնել ու միախառնութիւնը Ահմէտ պէյի տալ, արդիւնքը փրկարար պիտի ըլլար ու քրիստոնեաներուն վախը պիտի պակսէր: Եթէ ասիկա կարելի չէ, գոնէ երաշխաւորութիւն առնելու է քիւրտ պէյերէն որ թող պիտի տան Հայերուն ազատօրէն դաւանիլ իրենց կրօնքը, ծանր սուգանք մը սահմանելով՝ եթէ չյարգեն այդ երաշխաւորութիւնը: Բայց, կը վախնամ, ցորչափ Տահար պէյ, Եւրիֆ աղա եւ իրենց արբանեակները Բէկարի եւ Զիհպէի տէրը մնան, քրիստոնեաները կրօնական ազատութիւն պիտի չունենան այդ կողմերը: (1)

* *

Քիւրտ ցեղերը ընդհանրապէս հանդարտ են Սասուն ու Կինճ. ու բռնութեան կամ ճնշման ու եւ է պարագայ ականջիս չհասաւ մինչեւ Բէկար հասնիլս, ուր միախորհի՛մ Տահար պէյի՝ անպզամութիւնները իմացայ:

Պատիւանը կամ Խիանը ցեղը Կինճը եւ Մուշի տանճաքին մէկ քանի մասերը կը յաճախէ: Լաջբանը ցեղը կը գտնուի Մուշ եւ Հազուն: Պաքիրանը եւ Բաշքուզանը ցեղերը Տիարպէքիի եւ Սասունի միջեւ կ'երեւնան: Պալաքլըները կը տարածուին Խուլփի լեռներէն, Մուշի գաշ-

(1) Մ. Խ. Սըր Ֆիլիք Գրբի այս տեղեկագիրը ըստանալուն պէս Դրան դիտողութիւն կ'ուզէր մասնաւորապէս բռնի կրօնափոխութեանց մասին: Ահաւասիկ Դրան պատասխանը՝ իր 97 սեպտեմբեր 7ի յիշատակագրով.

«Բաղէշի կուսակալը, որուն հարցում ուղղուեցաւ Անդրիոյ զեպանին օգոստոս 3 թուակիր դիտողագրին մէջ յիշատակուած իրողութեանց մասին, կը հեռագրէ թէ վերջին խոսովութիւններուն ատեն խլամութիւն ընդունած Հայերը արդէն իրենց նախկին կրօնքին դարձած են, առանց իրենց գէմ ու եւ ճնշում ի գործ դրուելու՝ ստիպելու համար որ հրաժարին անկից:

«Գալով Կինճի տանճաքին Հայերուն զինուորական սուրբին գանձմանը, այդ մասին ու եւ է անկանոնութիւն գործուած չէ կայսերական իշխանութիւններէն: Իրաւ է որ տոմարին մէջ չարձանագրուած մէկ քանի անհատներ յայտարարած էին թէ իսլամ պիտի ըլլային՝ եթէ զինուորական սուրբը իրենցմէ պահանջուէր իրենց ծննդեան թուականէն սկսեալ, բայց երբ սեղական իշխանութիւնները պատասխանեցին թէ իրենց կրօնափոխութիւնը բնաւ զիրենք ազատ չի պիտի կացուցանէր զինուորական սուրբը այդ յիշեալ տարիներուն համար վճարելէ, կրօնքին չփոխեցին:»

Յաջորդ «Կապոյտ Գրբին» սպասելու ենք տեսնելու համար թէ թիւրք կառավարութեան այս յայտարարութիւնը որքան ճիշդ է, եւ թէ իրօք ա՛լ բռնի տաճկեցած Հայեր չի կան:

տին հարաւային կողմը, մինչեւ Սուրբ Մարտիրոսի (՝) լեռները, քրդական Սասունի մէջ: Զիհպէի, Բէկարի եւ ճապողջուրի մէջ, Տիմի ցեղը կը տիրապետէ, և Հալըրտանլըները՝ Տիարպէքիի եւ Լըճէքի սահմանները կը յաճախեն: Ասոնք ամենքն ալ վաշկատուն են, բացի Հալըրտանլըներէն որոնք կը սկսին տեղաւորուելու նշաններ ցոյց տալ, եւ տուներ շինած են Սարու՛մ Սուի հովանի մէջ:

Խուլփի գետակին հովտին մէջ, Եուսուֆ աղա և Հիւսէյին աղա, Բասուրի մօտ բնակող ազգեցիկ Քիւրտներ, պաշտպանութիւն կը շնորհեն քրիստոնեաներուն եւ կը զսպեն չափազանց ապօրէն Քիւրտները: Սինտաղի (Արտկանքի եւ Տալուրիի միջեւ, Խուլփի գաղա) Սիւլէյման աղան շրջակայ գիւղացիները կը հարստահարէ. այս մասին արդէն համբաւուար է: Սասունցի Քիւրտները, որոնք ամենէն կատաղիներն են, քիչ շատ պաշտպանութիւն կ'ընեն Տալուրիի Հայերուն, որովհետեւ երկուքնուն ալ մարտական սգին համակրութեան կապ մը հաստատած է իրենց միջեւ:

Աղբիկի ու Հիթէնքի (Սասուն) եւ Երկսիի (Խուլփ) Հայերը բարեկամարար կ'ապրին իրենց քիւրտ զբաղիւններէ հետ, եւ Սասունի ու Կինճի սերիշ շատ կողմերն ալ նոյնը կը տեսնուի, — Քիւրտները ու քրիստոնեաները, առանց ազդուելու կրօնական հակառակութեան, ըմբռնած են թէ իրենց շահերուն նոյնութեան մէջ է իրենց փոխադարձ բարգաւաճման ամենէն ապահով երաշխաւորութիւնը: Տարուան ինչ ինչ եղանակներուն դեռ խոսովութիւններ կը պատահին, երբ վաշկատունները ամբարն արօտատեղիները կ'ելլեն ու ետ կը դառնան, բայց, թէպէտ շատ վաշկատուններ այցելութեանս միջոցին կը ճամբարդէին, գուրութեան կամ բռնութեան ու եւ է գանգատ չըսեցի:

Քիւրտները, ի բաց առեալ բացէ Սասունցի և Մօսէքի Քիւրտները, ազգեցութեան տակ են, եւ կ' Պարսն եկած հրամաններէն կ'ակնաժին: Եթէ հիմա բուրբութիւն հանդարտ են պատճառն այն է պարզապէս որ սերիշ կերպ ըլլալու հրահանգ չունին: Գոնէ Սասունի մէջ՝ ուրքի չեն ելլեր առանց բարձրագոյն իշխանութեան հաւանութեանը կամ քաջալերութեանը: Յարմար «քաւութեան նոխալներ» են, որոնց վրայ կը նետէ կառավարութիւնը՝ իր իսկ զեղծ վարչութեան պատասխանատուութիւնը, բայց սխալ է կարծել թէ անզուպ են:

* *

Մուշի գաշալը 33 մղոն երկայնութիւն եւ 12 մղոն լայնութիւն ունի, եւ 200 էն աւելի գիւղ կը բաղանդակէ, որոնց 150ը հայ են: Ասոնց երեքը կաթնալիկ են, երեքը բողբոջական, եւ մնացեալը լուսաւորչական: Քարա Սու, Եփրատի մէկ օճանգակը, եւ Մուրատ Սու կամ Եփրատ կ'ոռոգեն զայն: Բարեբեր է. ցորեն, գարի, բրինձ, կարեկ, հաճար, կանեփ, որթ եւ բանջարեղէն առատօրէն կը բուսնին հոն: Բայց, հակառակ բնական ամէն կերպ առաւելութեանց, գաշտին մէջ ոչ մէկ բարգաւաճ հայ գիւղ կայ: Ոմանք արդէն ընկճած են սուրբերու գանձման ծայրացեղ ճնշումէն եւ անոր արդիւնք եղող չա-

րիքներէն, — վաշխառութենէն եւ իշխանութեանց ձեռքով իրենց ինչքերուն բռնի վաճառումէն՝ անդախան գանձը լեցնելու համար, եւ ուրիշներ, 1894ին ու 95ին շարաշար կողոպտուած, անկից ի վեր աչք բանալու ժամանակ ունեցած չեն: Հարստահարութիւնը կանոն դարձած եւ բնդհանուր է, եւ կառավարութեան նպատակը կը թուի աւելի՛ քրիստոնեայ ազգաբնակչութեան մը կործանումը կատարել ընել քան թէ առաջացնել բարգաւաճումը բերրի գաւառի մը, ուր ժրաջան երկրագործ ժողովուրդ մը կը բնակի, որ կարող է, արդար վարչութեան մը տակ, մշակուած հողի իւրաքանչիւր կանգունէն շահ հանել:

Արդի միւլթիսարըքը, Ռէշիտ պէյ, նոր է պաշտօնին մէջ, եւ ուրիշ բանի նայած չունի բայց իթէ իր վարչութեան տակ զանուող գաւառէն ինչպէս զրուշ մը աւելի կրնայ կորզել: Անպարկեշտ ու մոլեռանդ միւլթիթի մը ձեռքը կատարեալ խաղաղք մըն է: Տուրքերու գանձման մասին ի գործ գրած եղանակը սղբալի է: Իր հարկահաններուն ձեռքը ինչ որ կրնայ փոխել՝ կ'առնէ, զիտողութիւն մտիկ չընեն, կուտակալին պատուէրներուն ականջ չի կտներ, զանգատողները բանտ կը դրկէ, զինուորական տուրքը կը գանձէ՝ հակառակ բարձրագոյն հրամաններուն՝ այն տեղերէն ուր այդ տուրքը շնորհուած է, տուրքերու գանձումը բռնի առաջ կը տանի՝ ծեծով ու խուտանգուռներով, վերջապէս կը վաւերացնէ կամ կը բաշակելը, զեղծուեան սրտնը այնքան բազմատեսակ են որքան ճնշիչ:

Այն հայ գիւղերը ուր քիւրտ երեւելիներ կը բնակին, շրջակայ քիւրտ կայքերու բնակիչներէն չեն հարստահարուիր: Արիկա գրեթէ առած մըն է: Քիւրտը ստիկանի վեր կը կատարէ, եւ ստիկանը վճարուելու է: Կարգադրութիւնը, զուցէ, բիշ մը միակողմանի է, որովհետեւ պահապանները շատ բարձր արժէք մը կը գնեն իրենց մատուցած ծառայութիւններուն: Բայց Քիւրտիստանի մէջ, պաշտպանութիւնը, ինչ ճնութիւն ալ սննդայ կամ ո՛րչափ ալ սուղի նստի, միշտ հաճութեամբ կ'ընդունուի: Անոնք որ այդ բազմ չեն վայելի՛ր՝ իրենց քիւրտ զրացիներուն յափշտակութեանցը եւ աւարտութեանը ենթարկուած են, եւ տեղական պաշտօնեաներուն անտարբերութիւնը շատանց է իրենց ստիկանացած է երկարատեւ ու բազմամասն գանդատներու անօգուտութիւնը:

Գաշտին մէջ բազմաթիւ գիւղեր այցելեցի, եւ հարբուտահարութեան ու յոսի վարչութեան շատ ծանր օրինակներ գտայ, որոնք այնքան բազմաթիւ են որ մանրամասնել կարելի չէ:

Երկրագործութեան անկումը եւ Հայերուն սղբալի կացութիւնը զիտաւորապէս տրտասիրն է հինգ շարիքներու, զորոնք դարձանելը գիտար չէ:

1. Տասանորդի գրութիւնը. — Տասանորդը ամէն տարի աճուրդով կը ծախուի: Եթէ գիւղացիները իրենք կամ բիշ շատ խղճատանքի տէր միւլթիթի մը գնեն զանոնք, շարիք չի կայ: Բայց եթէ միւլթիթի մը, ինչպէս գրեթէ միշտ, լսի շահապետ մըն է որ իր տասանորդէն անգին ո եւ շահ չունի գիւղին մէջ, հետեւանքը աղիտալի է: Գնողը գիւղը կ'արշաւէ իր մարդերովը, գէտերովը, ձիերովը, ու հոն գիւղացիին երեսն կ'ապրի երեքն մինչեւ չորս ամիս: Օրինակն տասանորդը բերքին իբր հարիւրին 11 3 4ն է, բայց գիւղացիներէն յաճախ հարիւրին մինչեւ 25 կը կորզին: Դրութեան վտանգը սա է որ գիւղացիները եւ անոնց զոյութիւնը ամբողջովին մէկ մարդու իշխանութեանը կը թողու, որ նոյն տարուան համար գիւղին միահեծան տէրն է եւ որ ուզածին պէս կը վարուի գիւղացիներուն եւ անոնց ինչքին հետ, առանց կառավարութեան կողմէ ո եւ է միջամտութեան: Եթէ տասանորդը անպատճառ վարձակալութեան տրուելու է, այս կարգի շարիքներու առաջըր անելու միակ ապահով եւ գահացուցիչ միջոցն է «Ռէթի» դրութիւնը կամ «Էմանէթ»ը, այսինքն թէ տասանորդին սակարկութիւնը կատարուի ուղղակի գիւղին եւ տեղական կառավարութեան միջեւ, եւ հունձքին առին կառավարութեան պաշտօնեաները արգարութեամբ չափին բերքը, եւ համահաճ հաւանութեամբ որոշուած քանակութիւնը առնեն: Արդի դրութիւնը եւ իր հետեւանքները կը կործանեն կոր գիւղերը:

2. Տուրքի գանձման գեղձումները. — Տուրքերը ինքնին ծայրայեղ չեն: Եթէ արգարութեամբ գանձուին, ոչ ոքի համար բեռ են: Կառավարութիւնը սակայն միշտ զբաւի պէտք ունի, եւ չի կայ շտրաթ մը ուր հարկահանը գիւղը չըլլայ: Ժամանակ չի տրուիր, եւ օրինական տուրքին հոսպատիկը բոտապատիկը կը գանձուի: Պաշտօնատան մը գործակալները կ'այցելեն գիւղ մը եւ տուրք կը պահանջեն, ու միեւնոյն առին ուրիշ պաշտօնատան մը ներկայացուցիչները ամբողջ արու բնակիչները բռնի կ'առնեն կը տանին՝ ճամբաներուն շինութեանը աշխատելու: Հետեւանքը սն կ'ըլլայ սր գիւղացիները վաշխառուներուն ճանկը կ'իյնան, կամ թէ հարկահանները անոնց ստացուածքը քիւրտներուն կը ծախեն արժէքին մէկ չորրորդովը: Եթէ ընտանիքներ երկրէն մեկնին, արձանագրութեան ստմարը չի վերաբնուիր, եւ էն զիրակեացիները ստիկանուած են՝ իրենց տուրքէն գատ՝ թէ բացականերուն եւ թէ՛ իրենց ազգատ դրացիներուն տուրքերը վճարել: Կը պատահի այսպէս որ մարդ մը, որ արդէն հաշիւը մաքրած սրբած է, նորէն ու նորէն կը հրաւիրուի գահացնել պահանջուեան որոնց համար ո եւ է կերպով պատասխանատու չէ:

3. Աշխատութեան տուրքի գեղձումները. — Աւախաթը, կամ աշխատութեան տուրքը, ճամբաներուն համար, թաղապետութեան նախագահին ձեռքն է ամբողջովին: Գիւղի մը ոտքը—ձեռքը բռնող մարդերուն թիւը կ'արձանագրուի, եւ ասոնք ենթակայ են խումբ խումբ ճամբաներուն շինութեանը աշխատելու կանչուելու, իւրաքանչիւր անգամուն՝ արձանագրուածներուն մէկ երրորդը: Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է չորս օր աշխատիլ կամ 12 զրուշ վճարել: Դրութեան մէջ ինքնին սխալ չի կայ, բայց իր առաջ բերած զեղծուեանքը բազմապատիկ են: Երբեք, արձանագրուածներուն կէտը եւ յաճախ երեք չորրորդը մէկէն կը կանչուին եւ տասը կամ տասնըհինգ օր վար կը դրուին մինչեւ որ կաշառք տան եւ ազատին: Գիւղ մը որ արդէն իր պարտքը կատարած է, երկրորդ անգամ մըն ալ կը հրաւիրուի մարդ գրկելու վկայագրերը

րովը, ու հոն գիւղացիին երեսն կ'ապրի երեքն մինչեւ չորս ամիս: Օրինակն տասանորդը բերքին իբր հարիւրին 11 3 4ն է, բայց գիւղացիներէն յաճախ հարիւրին մինչեւ 25 կը կորզին: Դրութեան վտանգը սա է որ գիւղացիները եւ անոնց զոյութիւնը ամբողջովին մէկ մարդու իշխանութեանը կը թողու, որ նոյն տարուան համար գիւղին միահեծան տէրն է եւ որ ուզածին պէս կը վարուի գիւղացիներուն եւ անոնց ինչքին հետ, առանց կառավարութեան կողմէ ո եւ է միջամտութեան: Եթէ տասանորդը անպատճառ վարձակալութեան տրուելու է, այս կարգի շարիքներու առաջըր անելու միակ ապահով եւ գահացուցիչ միջոցն է «Ռէթի» դրութիւնը կամ «Էմանէթ»ը, այսինքն թէ տասանորդին սակարկութիւնը կատարուի ուղղակի գիւղին եւ տեղական կառավարութեան միջեւ, եւ հունձքին առին կառավարութեան պաշտօնեաները արգարութեամբ չափին բերքը, եւ համահաճ հաւանութեամբ որոշուած քանակութիւնը առնեն: Արդի դրութիւնը եւ իր հետեւանքները կը կործանեն կոր գիւղերը:

որոնցմով կը հաստատուի թէ իրենց աշխատութիւնը կատարած են՝ իրենցմէ ետ կ'առնուի, եւ, փոխանակ ճամբաներուն վրայ աշխատելու, յաճախ կը գործածուին իրենց վրայ հսկողներուն անձնական շինութիւններուն, ու ատոր համար որոշեալ ժամանակէն աւելի վար կը գրուին: Որովհետեւ ժողովուրդը ամբողջ երկրագործ է, բնականաբար ամբողջ գիւղի մը աշխատութիւնը երբեմն կ'ընդհատուի որչափ ատեն որ Աւստրալիա կը տեւէ, եւ ժողովուրդը մեծապէս կը մնասուի ասկից:

4. Ի շ շ ա ն ու թ ե ա ն զ ե զ ծ ու մ՝ պ ա շ տ օ ն ե ա ն եր ու ե ժ ա ն տ ա ր մ ա ն եր ու կ ո զ մ է. — Պաշտօնեաները եւ զապթիկները, երբոր հայ գիւղերը կը զրկուին կատարութեան գործերուն համար, բնակիչներուն երեսէն կ'ապրին: Իրենց կերածին խմածին համար փարա՝ մը չեն վճարեր, ու ատոնց էն ընտիրը կը պահանջեն: Էրիկմարդիկը ծեծելը ու խոշտանգելը՝ ընդհանուր է: Կիներու վրայ բռնաբարութիւն՝ կը պատահի, բայց նուազ յաճախապէս է: Իրենց վարմունքին զէպ ու է գանգատ անօգուտ է, որովհետեւ ականջ զնող չի կայ: Հետեւանքը սա է որ ահ ու սարսափ կ'ազդեն գիւղացիներուն, եւ ուզածնին կ'ընեն: Դարմանը հեռու փնտռելու չէ: Արդէն իբր սթապան քրիստոնեայ ժանտարա կայ Մուշ: Եթէ ատոնց թիւը աւելցուի եւ քրիստոնեայ գիւղերուն մէջ կատարուելիք գործը ատոնց յանձնուի՝ փոխանակ նուազ խղճահար թիւրքին, գիւղացիները անշուշտ քիչ մը աւելի շունչ կ'առնեն: Այն պարկեշտութիւնը ու անգթութիւնը ընդածին մոլութիւններ են, զորոնք զժուար է արմատախիչ ընել խորապէս տգետ մարդերէ, եւ կատարութեանէն եկած ամենէն ազգու հրամաններն իսկ չեն կրնար բարւոցել իր ժանտարմաններուն բնաւորութիւնը:

5. Ը ն գ հ ա ն ու ր ա ն ա պ ա հ ո լ ո թ իւ ն . — Հայը ապահովութիւն չունի իր գիւղին մէջ՝ Քիւրտին պատճառաւ, ոչ ալ կրնայ ճամբորդել կամ անասուններով ճամբէն անցնիլ կամ ապրանք փոխադրել նոյն իսկ մօտ տեղուանք իր գիւղէն կամ ուրիշ գիւղերէ, ատանց իր ինչքը կորսնցնելու վտանգի: Ասիկա մասնաւորապէս կը պատահի ամբան ամիսներուն, երբոր վաչկատուն Քիւրտերը իրենց հօտերը արածելու կը հանեն դաշտը հզերող լեռները: Հիմակ Հասանանը Համիտիկները կը կողոպտեն ամէն կարուան որ դաշտին արեւելեան ծայրի լեռներուն մօտէն կ'անցնի:

Վան քաղաքը կարուանները իրենց ճամբան փոխած են, եւ ապրանքները նաւով լճին միւս կողմը կը հանեն՝ հիւսիսային-արեւելեան բոլորագծին վտանգներէն զերծ մնալու համար: Զապթիկներուն ջանքերը ապարդիւն են, եւ տեղական կատարութիւնը, չարիքին առաջըր անհալ լուանկարող, սաստիկ հրամաններ կը զրկէ խոտիեալ վայրերուն գայմազամներուն որ գողցուած ինչքերը գտնեն ու տերերուն վերադարձնեն, հրամաններ՝ զորոնք գայմազամները հաւասարապէս անկարող են գործադրելու: Եւ սակայն Քիւրտերը, վաչկատուն կամ հաստատաբնակ, ուղղակի հնազանդութիւն կը պարտին իրենց ցեղէն փաշայի մը, պէյի մը կամ ագայի մը, ու հետեւաբար գիւղին է իշխանութիւն ստեղծելու իրենց վրայ: Եւ եթէ կեցրու-

նական կատարութիւնը, փոխանակ զոհ ըլլալու տեսնելով որ երկիրը անընակելի կը դառնայ, այդ փաշաները, պէյերը ու ագաները պատասխանատու բռնէր իրենց ցեղին մարդերուն արարքներուն համար, եւ ուղղակի հրամաններ զրկել Ռիզա ագային, Հիւսէյին փաշային եւ ուրիշներու որ վերջ տան իրենց աւարտութիւններուն ու ետ դարձնեն գողցուած արջառները, անապահովութիւնը վայրկեանի՛ն պիտի դադրէր, եւ գաւառին մէջ թի՛զ մը տեղ խոտիեալ պիտի չի մնար:

ՖՐԷՆՍԻՍ ԷՏՈՒՐՏ ԳՐՈՒՆ

Բաղէշ, 10 յուլիս 1897.

Խ Ա Բ Ո Ւ Ե Ց Ա Ն Ք

Երբ գարնանային օր մը 1892ին հեռագիրը հայ ազգին իմացուց Յորիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը՝ ամբողջ հայ ժողովրդին կողմէ Էջմիածին համախմբեալ երեսփոխանութեան միաձայն բու՛ւտլը, ամէն Հայ ցնցուեցաւ այն անձանցի բերկրանքէն որ ժողովրդի մը կեանքին գերագոյն վայրկեաններուն սրտերը կը յափշտակ անխտիր, մտքերը կը գրաւէ, ամենքը իրարու կը խանէ, ի մի կը ձուլէ: Ազգային զգացումն է որ ուժգնապէս երեսւան կուգայ: Կաթողիկոսին կոչուած թէւեւ կրօնական, բայց կաթողիկ Հայն ալ, աւետարանական Հայն ալ ցնծացին լուսաւորչական Հայուն հետ: Լոկ եկեղեցիի պետ մը չէր որ ընտրուած էր Էջմիածին. հայ հայրենիքի, հայ ազգութեան դազափարը նուիրադրծուած էր իր մեծագոյն ներկայացուցչին անձին մէջ: Չմոռնանք այս ճշմարտութիւնը ամէն ատեն որ Հայրիկ-կաթողիկոսը պիտի ստու՛նասիրենք:

Ուրախութեան սրբիշ ժամեր, դանուութեան շատ օրեր անկէ ի վեր իրարու յաջորդեցին. ազգային կեանքի բոլոր յեղաշրջումներուն մէջ Հայրիկ-կաթողիկոսին գէժըը հեռուէն ալ կարծես նրբին շղարշով մը քօղարկեալ կ'երեւի Հայուն սրտին աչքերուն. ու շշուկ մըն է որ կը լսուի.

—Չէ՛, խաբուեցանք Հայրիկը կաթողիկոս ընտրելով:

Իրա՛ւ խաբուեցանք: Բայց ամէն պարագայի մէջ մեզի խաբողը Հայրիկ ինքը չեղաւ: Միւրտիչ Ա. այն է ինչ որ թուաբանական ճշտութեամբ պէտք էր ըլլար Հայոց Հայրիկը կաթողիկոսական զահուն վրայ: Ու եթէ Միւրտիչ Ա. ըլլար այն կաթողիկոսը որուն իտեականը հիմա կը կերպարանաւորենք մեր մտքին մէջ, երբեք ունեցած պիտի չըլլայինք մեր ան Հայրիկը:

Իորիմեանի հետ բաղդատներ մէկ երկուքը մեր այն եկեղեցականներէն սրունք 1892ին կրնային կաթողիկոս ընտրուիլ, կամ որոնց տարիքը հաւանականութիւն կ'ընծայէ Հայրիկին յաջորդելու:

Առնենք Իզմիրեան եւ Սեպրակեան եպիսկոպոսները. կրնանք ենթադրել թէ երկուքն ալ իբր կաթողիկոս պիտի գերազանցեն Հայրիկը, վասն զի օժտուած են պաշտօնին յատկաւթիւններովը: Նախ եւ տուա՛յ՝ կեանքը լարջ բան

մըն է իրենց համար: Խստապահանջ են, մինչև իսկ բը-
 ծախնդիր, թող չեն ի տար ո՛ր է զեղծում իրենց շուրջը:
 Վարչական մարդեր, ընդարձակ կալուածներու տնտեսու-
 թեան ձեռնհաս են, ու պիտի յաջողին խելացի եւ խղճա-
 միտ մատակարարութեամբ բազմաբարձել Էջմիածնի նիւ-
 թական հարստութիւնը: Ու այս եւ ուրիշ շատ մը յատ-
 կութիւններու հետ մէկտեղ, տէր են նսեւ ամբողջ յար-
 զանքի մէջ պահելու գաղանիքին: — Բիշ կը խօսին եւ ա-
 ւելի քիչ ալ կը խնդան:

Այս երկու եպիսկոպոսները այն մարդերն են որոնց
 կարողութիւնները պաշտօնի համար են, պաշտօնի վրայ
 միայն կրնան նշանաւոր հանդիսանալ, նման ռազմագէտի
 տաղանդով օժտուած զօրականին որ իր մտքի ուժը չի
 կրնար ցոյց տալ մինչև պատերազմ չծագի: Եթէ 1894ի
 վերջին օրերը հանգամանքները չթոյլատրէին Իվանիւրեանի
 պատրիարքութիւնը, այդ եկեղեցականը պիտի շարունա-
 կէր սիրուել եւ յարգուել համիմատաբար անձուկ շրջանա-
 կի մը մէջ. բայց ընդհանուր ազգին համակրանքը դրաւե-
 լու համար պէտք ունեցաւ պաշտօնի մը որուն արժանաւոր
 հանդիսացաւ յուսացուածէն աւելի: Եւ մանապէս Սեդրա-
 կեան եպիսկոպոսն ալ սիրելի եւ յարգելի է գինքը մօտէն
 ճանչցողներուն, մասնաւորապէս Կովկասի Հայերուն. կա-
 թողիկոսական գահը բարձրանալով պիտի կրնայ ընդհա-
 նուր Հայութեան մարդը ըլլալ:

Իսկ Հայրիկ:

Հայրիկ, Մեծ Հայք եղաւ իր պարզ վարդապետու-
 թեանը մէջ:

Խորիմեան Մկրտիչ վարդապետ Հայոց Հայրիկը եղաւ
 վասն զի իր բոլոր յատկութիւնները կը հակառակին պաշ-
 տօնականութեան պահանջութիւններուն: Ապտամբ միտքն է
 կեանքի ամէն երեւոյթներուն հանդէպ. ռամկավարական
 յեղափոխն է ամէն սուանդութեան: Ո՛չ կարգ կայ իրեն
 համար ո՛չ կանոն, ո՛չ պատշաճութիւն ո՛չ անպատշաճու-
 թիւն, ո՛չ մեծ մարդ ո՛չ պարիկ, ո՛չ հարուստ ո՛չ աղքատ,
 ո՛չ ազատական ո՛չ խաւարամիտ: Երբ պատրիարք ընտ-
 րուած՝ առաջին անգամ երբ սուլթանին պիտի ներկայա-
 նայ կը հագնի վանի շայտիէ հագուտը. գայթակղած է
 ֆէնտիներու դիտողութեան կը պատասխանէ. «Թո՛ղ
 սուլթանն ալ մեր վանի շայտիին վրայ գաղափար մը ու-
 նենայ:» Հայ պէյերուն ապարանքները կ'այցելէ, ու ծո-
 վեզերեայ սենեակը նստած կը սկսի բարձրաձայն շարա-
 կան երգել. տանտէրերն ու սամտիրուհիները գետինը
 կ'անցնին, նաւակները պատուհանին առջեւ կը կենան, ու
 շոգենաններէն զլուխները կ'երկնան մտիկ ընելու: Հա-
 րուսաններն կը հրաւիրուի գամբանական խօսիլ իրենց
 ննջեցալիք վրայ, ու բեմէն բարոյապէս կը մեղցնէ գա-
 գաղին մէջ հանգչողը: Կ'այցելէ տունները եւ աղւոր կիներ-
 րուն հառաչելով կ'ըսէ. «Աչքերդ հանգուցեալ խանութիս
 աչքերուն կը նմանին, ա՛խ, ա՛խ.» ու դիտողութիւն ընող
 հակառակորդներու կ'ըսէ. «Ի՞նչ կայ. Յիսուս ալ Մագ-
 թաղենացիին հետ կ'իյնար կ'ելլէր:» Պատրիարքարանին
 մէջ իրիկունները շուրջը կը բոլորէ բարասպան, սպասաւոր,
 սենեկապան, եւ հետերին ժամանակ կ'անցընէ. առար-
 կութիւն ընտցնելու հեղուութեամբ կը յիշեցնէ Քրիստոսի

շուրջը բոլորուող ձկնորսները: Զինքը հալածող վարձկան
 խմբագիրները երբ իրեն կը դիմեն ու քանի մը ռսի կը
 խնդրեն յայտնելով թէ առանց այդ օգնութեան թերթը
 մամուլի տակ պիտի չի գրուի, կը հանէ կուտայ ինչ որ
 գրպանը կայ. «Խա՛, ծօ՛ գիտեմ, իմ ստակովս պիտի
 երթամ դիս լուսս, գիտեմ, քե՛զ տեսնամ, հայտէ.» ու
 իրաւ ալ հրապարակ ելած թիւը ամբողջապէս խրիմեանը
 կը հարուածէ: Սահմանադրական պատրիարք՝ կը յայ-
 տարարէ թէ ինք Սահմանադրութեան սփին պիտի յարգէ
 եւ ոչ տառը, ու եկեղեցիին բեմէն կը յայտարարէ. «Պօշ ի,
 պօշ ի. պօշ ի Սահմանադրութիւն, պօշ ի Ազգային ժողով.
 պօշ ի, պօշ ի.» և սակայն հաւատարիմ կը մնայ Սահմանա-
 դրութեան: Էֆէնտիներէ կազմուած Քաղաքական ժողովնե-
 րուն կը թշնամանայ, ու ժողովրդականներէ կազմուածնե-
 րուն խաղեր կը խաղայ: Ո՛չ առածը գիտէ ո՛չ առածը,
 բայց պատրիարքարանին պարտքերը կը վճարէ: Ժողո-
 վրդին գրպանը իրենն է, ու իրենը՝ ժողովրդին: Կը հեզնէ
 փաշաները, կուսակալներուն վրայ կը խնդայ, քիւրտ պէ-
 յերը կը դողացնէ: Եկեղեցական նուիրապետութիւնը կը
 մոռնայ ու ինք՝ պատրիարք՝ կաթողիկոսը կը ծաղրէ:

Բայց ան ինչ բոց է որ սրտէն կը ժայթքէ ու հողինե-
 րը կը լափէ. ան ինչ կրակ է շունչ է որ կը վարէ ժողո-
 վուրը, կը քշէ կը տանի դէպի մոռցուած երկիր մը. հիմա
 Սիրան տեղ Արարատը կ'անցնի. Աւետարանին հետ Ե-
 դիշէն, խաչին հետ թուրը կը քարոզուի. ազգութեան Մե-
 սիան եկած է. հայ հայրենիքը յարութիւն կ'առնէ, նոր
 հայութիւն մը կը ծնի: Ո՞վ պիտի վերլուծէ այդ հողին,
 ո՞վ պիտի վրձնէ այդ դէմքը. անըմբռնելին է, անշոշափե-
 լին է. հմայքն ինքն է: Այդպիսի տիպարի մը ի տես էր
 անշուշտ — զեղեցկազոյն տիպարը արարչագործութեան —
 որ Ծննդոցի հեղինակը, յափշտակուած, մարդկային դեմ-
 քի տակ երեւակայեց Աստուածը:

Թուարան այդ կրակուբոց հողին, հաշտարար գա-
 տաւոր այդ ըմբոստ միտքը, պաղարին տնտեսագէտ այդ
 հուր սիրտը, քաջհաշիւ տոմարակա՛լ այդ աղիքներու գա-
 լարիչը: Ութսունէն վե՛րջն է որ մարդը պիտի փոխենք:

* * *

Եւ սակայն Էջմիածնի կացութիւնը կը խոռվէ ամէն
 Հայու սիրտ. տխուր վիճակին վրայ Զարթուածեան ամփոփ
 գաղափար մը տուաւ. ու անկէ կը տեսնենք թէ շարիքը
 ուղղակի Հայրապետին անձէն չէ որ կը բղխի. կաթողի-
 կոսական գահը պաշարող վոհմակ մը կայ. ինչ հեշտ գործ
 յոգնած զաղբած ութսունամենի ծերունի մը շահագոր-
 ծել, ու անոր մրափող աչքերէն օգտուիլ կապտելու եւ կո-
 ղուպտելու համար:

Ու ե՛րբ եղած է թուական մը որ այդ վոհմակը գոյու-
 թիւն ունեցած չըլլայ: Աչքերնուս առջեւ բերենք վերջին
 երեսուն տարուան պատմութիւնը. 1866էն 1898 երեք
 կաթողիկոս ունեցանք, երեքն ալ իրարմէ տարբեր յատ-
 կութիւններով օժտուած, իրարմէ տարբեր թերութիւննե-
 րու ենթակայ, ու Էջմիածնի վարչութիւնը իր ծուրութիւնը
 անսայթմաբ շարունակեց: Կողուպտուեցաւ Էջմիածին Գե-
 սրգ կաթողիկոսի օրով, կոպտուեցաւ Էջմիածին Մա-

կար կաթողիկոսի օրով, կը կողոպտուի Էջմիածին Մկրտիչ-Հայրիկ կաթողիկոսի օրով: Սիմոնականութիւնը ընթացիկ բարոյականը եղած է երեսուն երկու տարուան մէջ, չարաշահութիւնը բարձրագլուխ տիրած: Գերազանցօրէն ճարպիկ խաբերաներ շրջապատած են կեդրոն մը ուրիշ վարձատրուող պաշտօններ կը բղխին ու շահեր կը հասին. հաշտեցին անոնք, կը հաշտեն ու պիտի հաշտեն ամէն բարեխիղճ, ուղղամիտ, սրտացու ու բարոյական նիւթեր Հայր Էջմիածին: Ամէն կաթողիկոս, ալեւոր ու վատասակաբեկ, ունի իր մարդը սրուն կ'ապաւինի այդ պարձիական մթնոլորտին մէջ, կեանքին ապահովութեանը համար. ու կաթողիկոսի կեանքին այդ պահպան հրեշտակը Էջմիածնի հօգեհան հրեշտակն է:

Աւազակներու եւ աւազակութեան պատրաստուողներու կաթողիկոսացուն Աշրգեան Խորէն պատրիարքն էր, որուն հովանիին տակ ամէն ապահովութիւն կը յուսային. ազգին սղջմտութիւնը ապարդիւն թողուց այդ դաւը, ու այդ դիշատիչները ինկան Հայրիկի վրայ: Թահարդը յարեցին մինչեւ Էրոստազէմ, զեռ կաթողիկոսական թափօրը ճամբայ չեղած Նյնդագետսպան մը, կամ գետպանուհի մը առաքեալ խրկեցին Հայրիկի մօտ, յուշիկ անուշիկ արատաստերիւ համար ամէն անոնք որոնց պարկեշտութիւնը սարսափ կ'ազդէր: Յետոյ սպրդեցան Հայրիկի բոլը, ու տիրեցին Էջմիածնի, եւ կովկասեան բոլոր եկեղեցական գործերուն: Կը քանդեն որ յափշտակեն, կը վաճառեն որ կողոպտեն, կը գաւեն որ հարստանան:

Հայրիկն ալ օր մը պիտի վախճանի. ինչ պատճառներ իշխուեանի մը, Սեղրակեանի մը դէմ: Բայց կորովալիբ, խտտաբարոյ, անաչառ եպիսկոպոս մը պիտի կրնայ երբեք կաթողիկոսանալ: Սեղրակեանը արդէն տասը տարի է կը հաշտուի, վասն զի իր կաթողիկոսացումը պիտի կրնայ ծանրագէտ յեղաշրջել Էջմիածինը: Իզմիրլեանի դէմ տակաւին յայտնապէս ահապ ցոյց չեն ի տար, եւ պիտի չի համարձակին թշ. բայց ապահով ըլլանք որ ձեռքի տակէ ամէն տեսակ զիւակսն ու զիւանագիտական գաւերը պիտի չի խնայուին: Եւ եթէ մինչեւ իսկ ազգը յաջողի իրեն կաթողիկոս ընարել այդ երկու եպիսկոպոսներէն մէկը, ո՞վ կրնայ ընդունիլ թէ ըսպէ մը հանգիստ պիտի մնան: Վստակը որ հիմա կ'ուշտուելու կը լափէ կը լափիլդէ, պատառ պատառ պիտի ընէ խարաղանով զինուած հովիւր:

Ազգային խղճմտանքը պիտի կրնայ բան մը ընել կաթողիկոսութիւնը շահագործող ճեռին դէմ: Խնդիրը հոս է: Ալ Հայրիկին վրայ ազգելու հնարաւորութիւն չի տեսնուիր. շատ ամուր պաշարուած է. գէթ ապագան փրկել խորհինք:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՆՐԵԱՆԵՐԸ

Այս թերթին մէջ, — որ բարձր առաջադրութիւններ ունի եւ կենսական հարցերու մտահոգութիւնը, — անձնական խնդիրներ անշուշտ տեղ չեն կրնար գտնել, եւ ես ինծի գծաւորաւ պիտի ներքի թերթին մէջ ունեցած դիրքէն օգտուիլ՝ «Նոր կեանք» ընթերցողները զբաղեցնելու համար ճշգիւ անձնական խնդրով մը, եթէ ատիկա ինծի առիթը չի տար միանգամայն մէկ քանի խօսք ըսելու ընկերական հարցի մը վրայ որ վերջերս մասնաւորապէս սղբալի ածմէութիւն մը ստացաւ:

Վիեննայի Միթիթարեաններուն «Հանգէս Աւստրիայ» նմարտի թիւին մէջ ինծի վերագրած էր յօդուած մը զոր Զօպանեան հրատարակած էր 1893ի վերջերը «Հայրենիք» ընթերցող Օսպար Ուայլտի դատին առթիւ, ու այդ յօդուածին հեղինակին ու անոր զաղափարակից խմբին «ազատամտութեան» գաս մը տալու անակնկալ դերը տուեր էր ինք իրեն: Ազատամտութեան գաս՝ կրօնաւորներէ:

Հանրային կեանքի մէջ, էն չսիրած բաներէն մէկն է վէճի բնուիլ ու եւ մէկու հետ — փափաք չունիմ բնաւ հանդիսատեսները զուարճացնելու, — այլ մանաւանդ կիներու, ճերտնիներու եւ կրօնաւորներու հետ, որովհետեւ յարգանքը զոր պարտաւոր ես ունենալ անոնց սեռին, տարեքին ու պաշտօնին նկատմամբ, կիրպով մը կը կաշկանդէ բեղի, ու բեղի տրուած հարուածին՝ նոյնքան ու աւելի ուժով պատասխանել կ'արդիւ մինչեւ մէկ ատրիան: Ասոր համար ալ, փափկանկատութիւնը կը պահանջէ իրենցմէ որ շարաշար չգործածեն այն տեսակ մը անպատճութիւնը զոր բնութիւնը կամ պարագաները տուեր են իրենց:

Փոխանակ անտարբերութեամբ անցնելու եղած սխալը եւ ուսերս թոթուելու «ազատամտութեան» գասին համար, — ինչ որ թիրեւս լաւագոյն պիտի ըլլար, — ելայ նմակ մը գրեցի «Հանգէս Աւստրիայ» խմբագրութեան, որ թէ՛ Զօպանեան եւ թէ՛ ես բարեկամներ միայն ունինք, եւ սպասեցի:

Ապրիլի թիւին մէջ չգտայ գրածս: Նամակս ուշ հասած ըլլալու էր, այդ թիւին մէջ ապագրուելու համար: Մայիսի թիւին մէջ ալ ի զուր փնտոցել, երբ բարեկամ մը ինծի յայտնեց թէ ապրիլի թիւին մէջ արդէն անոր մէկ յիշատակութիւնը եղած էր մէկ քանի տողով... Թերթին կափարիչին մէկ անկիւնը, երկու ծանուցման մէջտեղ: Իրա՛ւ ալ, գտայ որ «Հանգէս» խմբագրութիւնը կը հաճէր իմացնել ինծի թէ «Չեր բողձանաց համեմատ՝ կը ծանուցանենք թէ «Հայրենիք» յօդուածին հեղինակն է Ա. Չ., եւ ոչ թէ գուր, եւ թէ ակնարկեալ յօդուածը ջատագովութիւն մը չէր, հասցա բողբ մը ընդդէմ ակնեղեւ անարգարութեան մը:»

Ու այսչափ: Խորին ցաւով կը յայտնեմ «Հանգէս Աւստրիայ» խմբագրութեան թէ ինծի նկատմամբ ունեցած այն վարձուանքը բնաւ ուղիղ չէ: Իր սխալը ուղղելու եղանակը այնպէս մը կարգադրուած է որ ընթերցողը անշուշտ կար-

ծած է որ իրացնէ յանցապարտ յօրուածի մը հեղինակութիւնը իմ ուսերուս վրայէն Չօպանեանի վրայ նետեր հո, — ինչ որ նաժակս գրած ասոնն առաջագրած նպատակին սրամազճապէս հակառակն է:

Ես, սրչափ կը յիշեմ, ըսեր էի.

«Չուզելով որ պատմական ճշգրտումներու նուիրուած հանդէսի մը մէջ սխալ մը գտնուի՝ մանաւանդ մեզի այսքան մօտիկ գէպքերու մասին, կը փութամ՝ յայտնել ձեզի թէ այլ յօրուածը իմս չէր, հապա Չօպանեան բարեկամս: Ըսել չեմ ուզեր թէ ի հարկին չի պիտի ստորագրէի զայն. ընդհակառակը: Բայց չեմ ուզեր Չօպանեան բարեկամս կապակց այլ յօրուածը գրած ըլլալու իրաւունքէն, ինծի պահելով միայն զայն հրատարակած ըլլալու բաղդը:

«Փառով այն գտնի զոր կը հաճիք տալ ինծի ու ընկերներուս «բուն ազատական ոգոյն» նկատմամբ, ներեցէք որ գիտել տամ ձեզի թէ ակնարկեալ յօրուածը Չասագովուծիւն մը չէր արարքի մը, այլ բողոք մը ընդդէմ ընկերային կեցածառութեան. եւ այս բողոքը, այս ընդդիմութիւնը կարծեմ շատ կը մօտենան «բուն ազատական ոգոյն», ինչպէս դուք կ'անուանէք:»

«Հանդէս»ի խմբագրութիւնը, պատասխանիս կմախքը երկու տողով յիշելով, ինծի շատ գէշ ծառայութիւն մը մատուցած է: Բայց ինչ որ իս կը դայթակցեցնէ, զբական պարկեշտութեան զանցառութիւնն է որ երեւան կը բերէ ասով: Ամէն սեղ, էն անարգ մամուլը անգամ չի զլանար՝ իր սիւնակն երսւն մէջ՝ պատասխանելու իրաւունքը անոր որ իր սիւնակն երսւն մէջ սխալի մը կամ նախատինքի մը առարկայ եղած է, սրչափ աւելի երբ այդ անձը պաշտօնակից մըն է: «Հանդէս Ամսօրեայ»ն պաշտօնակիցի մը պատասխանը չհրատարակելով ու անոր իմաստը խեղաթիւրելով թերթէն դուրս, ինքզինքը հրապարակագրութեան տարրական պատշաճութիւններէն դուրս կը դնէ:

Հիմակ, գիտեմ թէ «Հանդէս»ի խմբագրութիւնը կըրնայ առարկել որ թերթին գիտական գոյնը իրեն թող չի տար անձնական խնդիրներու սեղ մը յատկացնել հոն: Բայց ես առաջինն եմ փափաքօղ որ «Հանդէսը» պահէ միշտ իր գիտական զբաւ նկարագիրը՝ որոնք համար հիացում ու յարգանք ունիմ միայն, պատմութեան ու բանասիրութեան բարձր ոլորտներէն. երբեք վար չիջնէ, — առանց հրապուրուելու այն աջ ու ահեակ գեղեցունքերով անպատճառ ազմուկ հանելու խնդրական հաճոյքէն, զոր ատենէ մը ի վեր զարմանքով կը հաստատեմ թերթին մէկ մասին մէջ: Այլապէս, բնագրի մը ճշգրտումէն կամ մագաղթի մը ուսումնասիրութենէն քիչ մը շունչ առնելու համար, ասդին անդին սլաքներ — հոգ չէ թէ ո՞րքան թեթեւ ըլլան — արձակելու զուարճութիւնը տալ ինքզինքին, ու պատասխանելու եկողին՝ անմիջապէս նորէն մագաղթին վրայ խոնարհել գլուխը՝ խտտալէմ ու դժնէ, — ասիկա վարուելու կերպ մըն է որուն ասպետականութիւնը «Հանդէս»ի խմբագրութեան կը թողում որակել:

Բայց կը հասնիմ այն բնկերական հարցին որ ի՞նչ մղեց զխաւորաբար դժբաղդ նամակս գրելու «Հանդէս Ամսօրեայ»ին, անձնական պարագաս լոկ առիթ մը նկատելով խօսելու համար միեւնոյն ասոն այն հակահրեական սաստիկ պայքարին վրայ զոր «Հանդէս»ը կը մղէ ժամանակէ մը ի վեր:

«Հանդէս»ը, առանց իմ գրածս մէջտեղ դնելու, ինծի կը պատասխանէ թէ «Հրեութեան դէմ կոխը հակամարդկային չէ, այլ պարագ մը, ու ինքնապաշտպանութեան ամենասուր զէնքն ալ շատ չէ՝ Հրեաներուն դէմ վերցնելու համար:»

Բայց ես ըսեր էի իրենց. «Ինչ որ բնաւ չեմ հասկնար սակայն, այն է երբ կը տեսնեմ Հայեր որոնք կը ծափահարեն Հրեաներուն դէմ սկսուած հալածանքին: Ինչո՞ւ չեն ուզեր ըմբռնել թէ, գաղափարի նոյն ուղղութեամբ, Հայերուն դէմ եղած հալածանքն ալ կրնայ արդարանալ:»

Հրեական խնդիրը անշուշտ Հայու տեսակէտով քննուելիք խնդիր մը չէ: Բայց, մեր մէջ, համամարդկային խնդիրները հասկնալու շափ լայն միտք ու զարգացում ունեցող մարդիկը քիչ են գեո: Ի՞նչ կ'ըսեմ, նոյն իսկ, բարոյականի հարցերուն մէջ, ասիական, այսինքն թրքական, ըմբռնումն է որ կ'առաջնորդէ շատերու: Երբ առաջին անգամ Ամբրիկայի հայ լրագրի մը մէջ կարդացի թէ Չօլա Հրեաներէն փարա առած ըլլալու է Տրեֆիւսը պաշտպանելու համար — բան մը որ իր էն զգուշի ու ցած հակաակորդները իսկ Ֆրանսայի մէջ՝ չհամարձակեցան արտաբերել — սաստիկ նեղութիւն պացի հաստատելով թէ կան գեո Հայեր որոնք չեն կրնար ըմբռնել Արդարութեան ու Ճշմարտութեան գերագոյն իտէալին անշահանդրօրէն նուիրուելու գաղափարը: Ո՞րքան աւելի մեծ եղաւ ցաւս երբ նոյն այդ համոզումը գտայ մեր ամենէն աւելի վարպետացած, եւրոպականացած կրօնաւորներուն «Հանդէս»ին մէջ:

Չէ, ձգենք հիմակ ընդհանուր մարդկային տեսակէտը, իբր Հայ գտեսնք հրեական խնդիրը:

Հրեաները կը հալածուին — ու պէտք է հալածուին, կ'ըսէ «Հանդէս»ը — որովհետեւ տարբեր ցեղէ ու կրօնքէ են:

Արդ, նոյն դատողութեամբ, թիւրքը ուրեմն իրաւունք ունի մեզ հալածելու: Ու մենք գիտենք որ միւսիլմանին աւտելութիւնը ու քամահրանքը քրիստոնեային համար՝ բազմապատեան չի կրնար գրուիլ ամենէն մոլեանդ կրօնաւորին ձեռքով անբանացած պատուի մը կամ մոնթի մը զգացման՝ հրեական կրօնքին նկատմամբ:

Հրեաները հալածելու է, որովհետեւ գիրենք շրջապատողներէն աւելի հարուստ են, կ'ըսեն վարձեալ:

Բայց ոչ մէկուն համար գաղտնիք մըն է թէ Հայը, երբոր մանաւանդ չի հալածուիր, նիւթական շատ աւելի լաւ կացութիւն մը ունի քան թիւրքը, որովհետեւ աւելի խելացի, աւելի աշխատասէր, աւելի մուծիալ, աւելի պարկեշտ է: Ու թիւրքը շատ լաւ ըմբռնած է ասիկա: Զարգիւրէն քիչ ստաջ, 1895 սպրիլ 5ին, սուլթանը կ'ըսէր

* * *

Սրբ Ծիլիբ Գլբրիի. « Հայերը հարուստ են ու թիւրքերը աղքատ: » (1)

Ա՛հ, կ'ըսէք սակայն, մասնաւորապէս իբր Հայ գաւառի՛՛վ է որ ծափահարելու ենք Հրեաներուն դէմ հալածանքին, որովհետեւ, մեր աղէտքներուն ատեն, բոլոր հրեայ սեղանաւորները մեզի հակառակ էին:

Իբր թէ հրեայ սեղանաւորներն էին միայն մեզի հակառակ: Ո՞վ մեզի ի նպաստ ձայն բարձրացուց, օրթոտոքս Ձա՛րը, բարեպաշտ Քալէ՛րը թէ չէ Նսրին Յոյժ Քըրիստոնեայ Վեհափառութիւնը Ֆրանսո-Եոզէֆ: Բայց ձեռք ատ աշխարհականները, — ամբողջ աշխարհի մէջ մէկը կար որ, իր զիրքովը ու կոչումովը, ՊԱՐՏԱԻՈՐ էր աղաղակ բառնալ քրիստոնեաներու շարդին դէմ, եւ սակայն լուռ մնաց: Ի՞նչ բրաւ ձեր Պապը, Յիսուսի-Քրիստոսի փոխանորդը երկրի վրայ:

Չեմ գիտեր թէ հայկական աղէտքներուն ատեն գտնուեցա՛ն հրեայ լրագիրներ որոնք յայտնի համարձակ ծափ զարնէին՝ հաշուելով թէ իւրաքանչիւր շարդուած բիր Հայուն՝ օսմանեան արժէթղթերը մէկ միւսին վրայ կը դնէին: Բայց ես պահած եմ գուտ կաթոլիկ թերթեր որոնք մեր աղէտքներէն ետքը կը գրէին թէ շնորհակալ ըլլալու է Աստուծոյ որ այդ շարդերը տնօրինեց, որովհետեւ կաթոլիկ միսիոնարներ կրցած էին անօթութենէ կիսամեծ մէկ քանի հայ իրենց փարախը առնել:

Երբ մեր աղէտքներուն մէջ ամէն մարդ իր հաշիւը ու իր շահը միայն փնտոց, ինչո՞ւ մինակ հրեայ սեղանաւորին օձիքէն բռնենք: Կաթոլիկ սեղանաւորն ալ, հաւասար բողոքականին, հրեային կամ անկրօնին — կը բաւէր որ օսմանեան արժէթուղթ ունենար, մեզի հակառակ էր: Իրամատէրը ամէն տեղ, ամէն ատեն, միեւնոյնն է, — իր շահը միայն կը խորհի: Երբոր թեաւ լից մէջ հելլենական բանակը կը ջախջախուէր, յոյն սեղանաւորները անդին Վիեննայի, Բարիզի եւ Պերլինի պորտաներուն մէջ օսմանեան արժէթուղթ կը գնէին, առանց մտքերնէն անցնելու թէ օսմանեան վարկին բարձրացմանը կ'օժանդակէին: Այսօր ամէն մարդ գիտէ որ եթէ Ֆրանսա լոկ պըզատնական բողոք մը կը բարձրացնէ Անգլիացիներուն Եղիպտոս մնալուն դէմ, պատճառը այն է որ ֆրանսացի բաժնետէրերը, որոնք անգլիական վարչութեան շնորհիւ կանոնաւորապէս կը ստանան իրենց եգիպտական թղթերուն տոկոսը, ի ներքուստ չեն փափաքիր որ Անգլիացիները հեռանան Եգիպտոսէն: Եթէ այսօր Ֆրանսա, իր բոլոր աւանդութիւնները ուրանալով, Սպանիոյ կողմն է եւ Քուպայի արդար դատը կ'ուրանայ, գլխաւորապէս անոր համար է որ միլիոններով սպանիական թուղթ ունի ձեռքը: Ու գիտենք որ Ամերիկա, Ռուս Սղրիզի սեղանաւորները հակառակ էին Քուպայի աղատազրութեան համար Սպանիոյ դէմ պատերազմ հրատարակելու գաղափարին, մինչեւ որ ժողովրդական զայրոյթը աճեցաւ աճեցաւ ու պողովակց բռնապատելով պատերազմի յայտարարութիւնը: Ուրե՛մ:

Կը դառնամ կուզամ իմ հարցումիս. Ի՞նչ պիտի ը-

(1) « Կապոյա Գիբը », Թիւրքիա թիւ 1 (1896):


սէիք եթէ մեր ցեղը, մեր կրօնքը, մեր մտաւորական եւ տնտեսական առաւելութիւնները թիւրքին ձեռքը մէյմէկ արդարացուցիչ փաստ նկատուէին մեզ հալածելու ու ճրգմելու: Ի՞նչ պիտի ըսէիք եթէ, ձեր փափաքածին պէս, հակահրէական մտքի ուղղութիւնը ամբողջ Եւրոպայի « Հաւատամբ »ը դառնար եւ թիւրքը չքմեղացնէր մեզի դէմ ձեռք առած միջոցներուն համար: Ի՞նչպէս կը մոռնաք կար թէ անդին սուսական մամուլ մը կայ որ Չարին կառավարութեան խորհուրդ կուտայ Անգլիոյ վրայի Հայերուն հետ այնպէս վարուել ինչպէս վարուեցաւ Հրեաներուն հետ:

Հարցում՝ մըն ալ, ու կը վերջացնեմ:

Վիեննայի Միթիթարեանները հոյակապ սպարան մը ունին որ, մէկզի թողլով իր բարոյական անհուն արժէքը, առեւտրական տեսակէտով սքանչելի գործ մըն է Վիեննայի մէջ, արդիւնք զայն վարդիներուն խելացութեանը, անտեսազիտութեանը ու տոկունութեանը, ու պատիւ կը բերէ հայ ցեղին վարչական ու գործօն ոգիին: Արդ, ի՞նչ պիտի ըսէր « Հանգէս Ամսօրեայ » ի խմբագրութիւնը եթէ որ մը Վիեննացի սպարանատէրներ, նուազ յաջող իրենց գործառնութեանցը մէջ, յարձակէին այդ բարդաւան օտար մրցակցին վրայ ու քանդէին փշրէին Միթիթարեան սպարանը:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեդին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔը կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին: Բաժնեդինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ առաջին չորս թիւերէն մէկը քանի օրինակ շնորհաբար զրկուած ըլլալով մեզի այլեւայ կողմերէ, պատրաստ ենք զրկելու այն բաժնետէրերուն, որ ստացած չեն այդ թիւերը եւ կը փափաքին ունենալ:

Նոր բաժնետէրութիւնները կը սկսինք հինգերորդ թիւէն (մարտ 1):

Որովհետեւ յաճախ գժուարութիւններու կը մատնուինք կոր մեզի զրկուած մանտա-բոստներու կամ մընի-օրտըրներու գանձման մէջ, հարկ կը համարինք յիշեցնել թէ, 1. Պէտք է մանտա-բոստը կամ մընի-օրտըրը զրկել Լ. Ֆրանք անուան, վճարելի Լոնտոն (եւ ոչինչ աւելի): 2. Ղրկողը պէտք է յայտնէ մեզ այն անունը որով մանտա-բոստը կամ մընի-օրտըրը առած է: